« Ն Ո Ր Ա Վ Ա Ն Ք »
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Թամարա Վարդանյան

Կարեն Ավետիսյան

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երևան – 2005

ՀՏԴ 329 (479.25)
ԳՄԴ 66.7 (2 Հ)
Վ 301

Վարդանյան Թ., Ավետիսյան Կ.

Վ 301 Երիտասարդական հասարակական կազմակերպությունների դերը Հայաստանում. — Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2005. - 94 էջ

Աշխատությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեությանը, առանձնահատկություններին, ՀԿ դաշտի հիմնախնդիրներին, այս ոլորտում միջազգային կազմակերպությունների, պետության դերի ու գործունեության լուսաբանմանը: Նախատեսվում է ՀԿ սեկտորի ներկայացուցիչների, հասարակագետների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ԳՄԴ 66.7 (2 Հ)

ISBN 99941-961-0-3

© «Նորավանք» ԳԿՀ, 2005

1. Ներածություն

1.1 Թեմայի արդիականությունը և հրատապությունը

Հայաստանի Հանրապետության հասարակական համակարգի ուսումնասիրությունը, առանձնահատկությունների վերհանումն ու առկա միտումների դիտարկումը, ինչպես նաև հասարակության գաղափարախոսական դաշտի հետագա կայացման ու զարգացման ընթացքում հնարավոր կանխատեսումների իրականացումն այսօր խիստ կարևոր և արդիական են: Հասարակական համակարգի հիմնախնդիրներն ու զարգացման օրինաչափությունները սերտորեն առնչվում են աշխարհաքաղաքական, ռազմավարական, աշխարհատնտեսական, գաղափարական, քաղաքակրթական, հոգեբանական և նշված ոլորտների հետ ուղղակի կամ անուղղակի հարաբերվող կամ ածանցյալ բազմաթիվ այլ խնդիրներին:

Հասարակական դաշտի հետազոտումը կարևորվում է հատկապես պատմական այն փուլերում, երբ ընթանում են ակտիվ քաղաքական գործընթացներ թե՛ ներքաղաքական, թե՛ արտաքին քաղաքական հարթություններում (ասենք՝ ընտրական գործընթացներ, հակամարտությունների լուծման դիվանագիտական ջանքերի ակտիվացում, գերտերությունների ներդրումային հոսքերի աշխուժացում, դրա հետևանքով տարածաշրջանում նրանց ազդեցությունների ուժեղացում, ռեսուրսների համար

մղվող պայքարի թեժացում, հարևան որևէ պետության արտաքին քաղաքականության ռազմավարության հնարավոր փոփոխություն և աշխարհաքաղաքական բնույթի ցանկացած տեղաշարժ)։

Մեր տարածաշրջանում վերոհիշյալ գործընթացների առկայությունն արդի փուլում ակնհայտ է։ Այս իրադրությունը նույնպես թելադրում է հնարավորինս արագ անդրադառնալ Հայաստանում ձևավորված հասարակական համակարգի խնդիրներին, ընդ որում՝ մի քանի դիտանկյուններից։ Դաշտի ուսումնասիրությունն ուշագրավ է և՛ գլոբալ քաղաքականության, և՛ տարածաշրջանային զարգացումների, և՛ ներքաղաքական իրադրության առումով, քանզի նշված հարթություններում զարգացումներն ակնհայտորեն արտացոլվում են նաև երկրի ներսում ձևավորվող և անընդհատ դինամիկայի մեջ գտնվող հասարակական հարաբերություններում։

1.2 Աշխատանքի մեթոդաբանությունը

Ուսումնասիրության հիմքում ընկած են հիմնականում դաշտային հետազոտությունները (անհատական հարցազրույցներ ՀԿ դաշտի ներկայացուցիչների հետ)։ Ընդհանուր առմամբ գրանցվել է 60-ից ավելի հարցազրույց երիտասարդական հասարակական կազմակերպությունների (ՀԿ) նախագահների և ակտիվ անդամների հետ։ Ձայներիզները և տեքստերը պահվում են «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի պահոցում։ Հետազոտության ընթացքում ճշտվել են այս պահին իրենց գործունեությունը «սառեցրած» ՀԿ-ների քանակը և կազմը։ Իրականացվել է նաև գործող երիտասարդական ՀԿ-ների ակտիվության գնահատում՝ ըստ մշակված չափորո-

շիչների: Օգտագործվել են տեսական բնույթի, նաև հասարակական համակարգի փիլիսոփայությանն առնչվող մի շարք ուսումնասիրություններ: Դաշտային նյութը մեջբերվել է առանց խմբագրման:

Հետազոտության առարկա են դարձել միայն այն ՀԿ-ները (աննշան բացառություններով), որոնք ՀՀ արդարադատության նախարարությունում (մինչև 2004թ. հունվարի 1-ի տվյալներով) գրանցված են որպես երիտասարդական ուղղվածությամբ գործող ՀԿ-ներ: Դրանց կազմում կան այնպիսիներ (մոտ 20%-ը), որոնք, բացի երիտասարդական ուղղվածությունից, որդեգրել են մեկ կամ երկու այլ ուղղվածություն ևս, ասենք՝ սոցիալական, կրթական, բարեգործական, մշակութային, գիտական, իրավապաշտպան, առողջապահական, մարզական, ուսանողական, տնտեսագիտական, ժողովրդավարության աջակցության, հայրենասիրական, ազգային փոքրամասնությունների, հաշմանդամների և այլն:

Մինչև 2004թ. հունվարի 1-ը ՀՀ արդարադատության նախարարությունում պաշտոնապես գրանցված են եղել 216 երիտասարդական ՀԿ-ներ, որոնցից 169-ը կամ 78,2%-ը որպես գրանցման վայր նշել են Երևանը, մյուսները՝ ՀՀ մարզերը: Մարզերից առավել ակտիվ են Շիրակը, Լոռին, Սյունիքը, Վայոց ձորը: Սույն ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են 130-ից ավելին: Որոշակի դժվարություններ եղել են ՀԿ-ների փնտրտուքի ընթացքում: Օրինակ՝ ՀԿ-ն պաշտոնապես գրանցված հասցեով կամ հեռախոսահամարներով փնտրելիս հարցվողները պարզապես տեղյակ չեն եղել տվյալ ՀԿ-ի գոյության, առավել ևս՝ գործունեության մասին: Որոշ սահմանափակումներ եղել են նաև մարզերի հետ

կապված, քանի որ մեր հետազոտությունն ընդգրկել է Երևանը, Գյումրին, Վանաձորը, Սյունիքի մարզը։

Ուսումնասիրության ենթարկված երիտասարդական ՀԿ-ները, ըստ գործունեության ակտիվության, բաժանվել են հետևյալ կերպ[1].

- *Առավել ակտիվ*
- *Բավական ակտիվ*
- *Միջին ակտիվության*
- *Պասիվ*
- *Չգործող*

Հարցաթերթիկը բաղկացած էր հարցերի երեք խմբից.

1. Ընդհանուր տեղեկություններ ՀԿ-ի մասին՝ նախագահը, իրականացված ծրագրերի քանակը, թեմատիկան, գրասենյակի, կայքի առկայությունը, անդամները, դոնորները։
2. Զրուցակցի տեսակետը ՀԿ հիմնախնդիրների և միջազգային կազմակերպությունների գործունեության վերաբերյալ։
3. ՀԿ առաջնորդների արժեքային կողմնորոշումները և աշխարհընկալումը։

2. Հասարակական կազմակերպություններ

ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական տվյալների համաձայն, այսօր Հայաստանում գրանցված են գոր-

[1] Դասակարգման արդյունքները տոկոսներով ներկայացված են 3.2՝ «Ակտիվությունը» ենթաբաժնում։

ծունեության տարբեր ուղղվածություն ունեցող մոտ 4000[1] հասարակական կազմակերպություններ: Հատկապես մեծաթիվ են բարեգործական, մշակութային ուղղվածությամբ գործող հասարակական կազմակերպությունները *(տե՛ս աղյուսակ 1)*: Փոքր չէ նաև երիտասարդական կամ երիտասարդական հիմնախնդիրներով զբաղվող, իրավապաշտպան, մարզական, հայրենակցական, տնտեսական, կանանց, երեխաների հիմնախնդիրներով զբաղվող, քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու ժողովրդավարությանն աջակցող, նաև միջազգային և գործունեության այլ ուղղվածություն ունեցող ՀԿ-ների թիվը:

Ուշադրության արժանի է հետևյալ հանգամանքը. 2002թ. տվյալների համաձայն, ՀԿ-ների թիվը բնակչության 1000 անձի դիմաց Հայաստանում կազմում էր 0,8 միավոր, Վրաստանում համապատասխանաբար՝ 0,7, իսկ Ադրբեջանում՝ 0,17[2]: Հարկ է նշել, որ թեպետ Հայաստանում և Վրաստանում պաշտոնապես գրանցված ՀԿ-ների քանակական տվյալների տարբերությունն աննշան է, այնուամենայնիվ, եթե հաշվի առնենք ղարաբաղյան հակամարտության հետևանքով միջազգային դոնոր կազմակերպությունների Վրաստանում առավել կենտրոնացման փաստը, ապա Հայաստանի հասարակական կյանքը տարածաշրջանի կտրվածքով կարելի է բնորոշել որպես բավականաչափ ակտիվ: (Ավելացնենք, որ Վրաստանում Մ.Սահակաշվիլու իշխանության գալուց հետո միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տարածաշրջանում իրականացվող ծրագրերի մեծ մասը շարունակում է հաս-

[1] Ըստ առավել ճշգրտված ցուցակի՝ 3787 ՀԿ:
[2] Погосян Г.А., Армянское общество в трансформации, Ер., 2003, с. 223.

նել վրացական հասարակական կազմակերպություններին: Տարածաշրջանային կտրվածքով որոշակի ծրագրեր իրականացնող դոնորները գերադասում են մշտական գրասենյակներ հիմնել Վրաստանում և այնտեղից աշխատել նաև հայկական ու ադրբեջանական ՀԿ-ների ակտիվիստների հետ):

Այնուամենայնիվ, մեր հանրապետությունում պաշտոնապես գրանցված ՀԿ-ների քանակական բարձր ցուցանիշը չի կարելի դիտարկել որպես մեզանում հասարակական համակարգի կամ, ինչպես ընդունված է ասել, երրորդ սեկտորի[1] կայացվածության ապացույց: Դա կնշանակեր խնդրին մոտենալ մակերեսորեն և անտեսել ընդհանրապես հասարակական կազմակերպություններին վերապահված գործառույթների դաշտի հստակեցման այսօր արդեն արդիական խնդիրը: Նախ նկատենք, որ ՀՀ-ում պաշտոնապես գրանցված ՀԿ-ների մեծ մասը միայն դե յուրե գոյություն ունի: Միաժամանակ քիչ չեն այնպիսի կազմակերպությունները, որոնց գործունեությունը սահմանափակվել է ստացված դրամաշնորհների արդյունքում իրականացված մեկ կամ երկու ծրագրով: Դա, ակնհայտորեն, չի խթանել տվյալ ՀԿ-ի հետագա կայացման գործընթացը որպես հասարակական դաշտի քիչ թե շատ ակտիվ դերակատար (այս իրադրությունը պետք է որ հատկանշական լինի նաև Վրաստանի և Ադրբեջանի համար):

[1] Ժամանակակից սոցիոլոգիայում ընդունված է հասարակությունը բաժանել երեք սեկտորների.
Առաջին սեկտոր՝ պետություն և իշխանություն:
Երկրորդ սեկտոր՝ ձեռներեցություն – բիզնես, հիմնականում՝ մասնավոր բիզնես:
Երրորդ սեկտոր՝ հասարակական շարժումներ և հասարակական կազմակերպություններ, տե ս Погосян Г.А., Армянское общество в трансформации, Ер., 2003, с. 223.

Աղյուսակ 1.

1991-2001թթ. ընթացքում ՀՀ-ում պաշտոնապես գրանցված ՀԿ-ների դասակարգումն ըստ գործունեության ուղղությունների



Քննարկենք ՀՀ հասարակական համակարգի առանձնահատկությունները նշված հիմնախնդիրների համատեքստում։

Կարելի է պայմանականորեն առանձնացնել չորս հիմնական շարժառիթներ, որոնք նպաստել և դեռևս շարունակում են խթանել Հայաստանում հասարակական կազմակերպությունների ստեղծման գործընթացը.

1. հասարակական պահանջ արտահայտելու նպատակով ստեղծված ՀԿ-ներ,
2. դրամաշնորհ ստանալու նպատակով ստեղծված ՀԿ-ներ,
3. ՀԿ-ներ, որոնք հանդիսանում են միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններ և ստեղծված են ուղղակիորեն նրանց կողմից,
4. պետության կողմից ստեղծված ՀԿ-ներ։

Համաձայն հարցազրույցի մասնակիցների, «ՀԿ-ները բնականորեն, այսինքն՝ խնդիրների շուրջ, չեն ստեղծվում, այլ դրամաշնորհային ծրագրերի արդյունք են»։

Նշենք, որ առկա գնահատականներն ու ուսումնասիրությունները մեզ իրավունք են տալիս փաստել, որ ըստ նշված չափանիշների՝ հայաստանյան ՀԿ-ների դասակարգման պարագայում առաջին խմբում հայտնվածների քանակը բավականին համեստ է։ Պատճառն այն է, որ, ինչպես իրավացիորեն նշում է Գ.Պողոսյանը, «Հայաստանում երեք սեկտորները ստեղծվեցին, ձևավորվեցին և զարգացան համարյա միաժամանակ»[1]։

Եթե դիտարկենք Արևմուտքի երկրների փորձը, ապա կտես-

[1] Погосян Г. А., նշվ. աշխ., էջ 221։

նենք, որ այնտեղ սկզբում ստեղծվել է պետությունը, այնուհետև ձևավորվել է մասնավոր բիզնեսը, որից հետո միայն՝ հասարակական կազմակերպությունները։ Գ.Պողոսյանն այս դիտարկման հետևանքների ուսումնասիրությունը թողնում է տեսաբաններին։

Իրապես, նման զարգացումների հետևանքով մեզանում ձևավորված հասարակական կազմակերպություններից շատերը զուրկ են սոցիալական հենարանից, իսկ հայ հասարակությունը հեռու է հասարակական կազմակերպությունների գոյության անհրաժեշտության գիտակցումից։ Այս իրավիճակն առավել պատկերավոր ներկայացնելու համար նպատակահարմար ենք գտել ուղղակի մեջբերումներ անել երիտասարդական ՀԿ-ների նախագահների և ակտիվ ներկայացուցիչների հետ մեր ունեցած հարցազրույցներից.

- *ՀԿ սեկտորը ճիշտ չի ընկալվում, ՀԿ-ներն իրենք էլ չեն հասկացել իրենց տեղն ու դերը,*
- *ծրագրերը թղթի վրա շատ մոտ են հասարակական խնդիրներին, բայց իրականում՝ ոչ,*
- *ժողովուրդը չի ճանաչում ՀԿ-ներին, այլ ճանաչում է մարզպետին,*
- *ՀԿ-ները ձևական են,*
- *ՀԿ-ները կցորդ են այլ կառույցների,*
- *ՀԿ-ների 99%-ը ֆիկցիա է, մեծ մասը դրամաշնորհի համար է, ստեղծումը դրդված է ինչ-որ ուժի կողմից, ոչ թե ժողովրդի, նաև բիզնես է,*
- *ՀԿ-ների հետևում հասարակություն կանգնած չէ, այլ իր ընտանիքի անդամները, ընկերները, ՀԿ-ն աշխատատեղ է, շատ տեղերում չգիտեն, թե ՀԿ-ն ինչ է,*

– *մեր հեղինակությունը բարձր չէ,*
– *եթե գրանտ չկա, չենք աշխատում,*
– *դրսից ներդրում չլինի՝ ՀԿ-ները չեն գործի,*
– *չունեն հստակ պատկերացում իրենց առաքելության, նպատակների վերաբերյալ, չեն կենտրոնանում կոնկրետ հարցի շուրջ։*

Պատասխաններից կարելի է եզրակացնել, որ ՀԿ սեկտորի ներսում գիտակցում են իրենց գործունեության արդյունավետության բարձրացման, այն հայ հասարակության իրական պահանջներին մոտեցնելու անհրաժեշտությունը։ Որպես ցածր արդյունավետության պատճառ նշվում են ֆինանսական կախվածությունը դոնորներից, ֆինանսական անկայունությունը, փորձի պակասը, վատ կառավարումը։

Այսպիսով, Հայաստանում զարգացող երրորդ սեկտորին դեռևս չի հաջողվում իրականացնել ի սկզբանե իրեն վերապահված առաքելությունը, այն է՝ հասարակական պահանջներին համահունչ խնդիրների ձևակերպում, արտահայտում, պետության և հասարակության միջև երկխոսության դաշտի ձևավորում։

3. Երիտասարդական ՀԿ սեկտորը

ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված երիտասարդական ուղղվածության ՀԿ-ները միատարր չեն։

ՀՀ-ում գործող երիտասարդական ՀԿ-ները, ըստ գործունեության ուղղվածության և որոշ առանձնահատկությունների, կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

1. Գաղափարախոսական ուղղվածությամբ ՀԿ-ներ, օրինակ՝

երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության ՀԿ-ներ, երիտասարդ պահպանողականների, ազատականների, դեմոկրատների, կոմունիստների միավորումներ և այլն,

2. երիտասարդների քաղաքացիական կրթությանը, իրավական ինքնագիտակցության աճին նպաստող, երկրի հասարակական–քաղաքական կյանքին նրանց ներգրավվածությունը խթանող ՀԿ-ներ,
3. երիտասարդության (հաճախ՝ ուսանողների) համար միջազգային փոխանակման ծրագրեր իրականացնող ՀԿ-ներ,
4. տարածաշրջանային ինտեգրացման, հակամարտությունների լուծման խնդիրներ հետապնդող ՀԿ-ներ,
5. գիտահետազոտական կենտրոններ, որոնց մեծ մասը գործում է հիմնականում բուհերի ամբիոններին կից,
6. սոցիալական ուղղվածության ՀԿ-ներ (այդ թվում՝ երիտասարդ հաշմանդամների, ծնողազուրկ երեխաների, փախստականների և խոցելի այլ խմբերի հիմնախնդիրներով զբաղվող, համայնքային զարգացման ծրագրեր իրականացնող և այլն),
7. մասնագիտական կազմ և կոնկրետ ուղղվածություն ունեցող միավորումներ՝ իրավաբանների, հոգեբանների, վիրաբույժների, տնտեսագետների, պատմաբանների, բնապահպանների և այլն,
8. մշակութային ուղղվածության ՀԿ-ներ, որոնց զգալի հատվածը ներգրավված է շոու-բիզնեսում։

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երիտասարդական ՀԿ-ների գործունեության բնույթը, արդյունավետությունը, հասարակության հետ հարաբերությունները, քաղաքականացվածությունը, առաջնորդների և աշխատակազմի արժեքային և գաղափարական կողմնորոշումները, պետության և միջազգային կառույցների նկատմամբ վերաբերմունքը մեծապես պայմանավորված են նաև ներկայացրած խմբերից որևէ մեկին այդ երիտասարդական կառույցի պատկանելությամբ: Հարկ է նշել, որ այս խնդրում գործոնների փոխազդեցությունների ու պատճառահետևանքային կապի խնդիրը բավական նուրբ է, և հնարավոր է հակառակ թեզը առաջադրել: Օրինակ՝ վերը նշված գործոնները որոշակի ուղղվածություն են հաղորդել տվյալ ՀԿ-ին, ինչի հետևանքով այն հայտնվել է այս կամ այն խմբում:

3.1 Գաղափարախոսությունը

Հետազոտությունը ցույց է տալիս, որ հայրենասիրական, ռազմահայրենասիրական, հայեցի դաստիարակության, ազգային ավանդույթների և մշակութային արժեքների պահպանման, տարածման և նման այլ երիտասարդական ՀԿ-ների թիվն անհամեմատ քիչ է: Այն զիջում է այլ ծրագրային նպատակներ հետապնդող երիտասարդական ՀԿ-ների թվին (նման ՀԿ-ների տոկոսային կշիռը չի գերազանցում գործողների անգամ 3-4 %-ը): Այնուամենայնիվ, պետք է նշել, որ այստեղ նկատի ունենք նշված նպատակների՝ որպես ՀԿ որդեգրած ռազմավարության և պաշտոնապես հաստատված ծրագրային դրույթը: Այս իրողությունը կարելի է

բացատրել թերևս նրանով, որ նման նպատակներով և հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների՝ միջազգային կազմակերպություններից դրամաշնորհներ ստանալու ակնկալիքները խիստ սահմանափակ են: ՀԿ նախագահներից մեկի խոսքերով, «դիմել եմ դոնորներին, մերժել են: Ինձ ասում են. եթե ազգային արժեքներ եք քարոզում, ձեզ դրամաշնորհ չեն տա»: Հետևաբար, այս դաշտում հայտնված ՀԿ-ներն իրենց գործունեության ծավալման համար ֆինանսավորում ակնկալում են հիմնականում պետական կառույցներից, պետական հիմնադրամներից, անհատ ձեռներեցներից, որոնք «մի օր կհասկանան այդ խնդիրների կարևորությունը»: ***Այսինքն՝ նաև ՀԿ-ների միջոցով տեղի է ունենում ՀՀ գաղափարական դաշտի ձևավորում տնտեսական մեթոդներով:***

Սակայն պատկերն այլ է, երբ ուսումնասիրում ենք դաշտային նյութերը: Հարցազրույցների մասնակիցներից շատերը, մեր հարցին ի պատասխան, նշում են, որ իրենք կարևորում են նշված հիմնախնդիրները և հնարավորության սահմաններում ձգտում նպաստել դրանց լուծմանը: Հաճախ արտահայտվել է այնպիսի մոտեցում, թե՝ «դոնորները, իհարկե, ունեն իրենց նպատակները, իրենց շահերը, մենք ընտրության այլ հնարավորություն չունենք: Բայց եթե կարելի է այդ շահերը ծառայեցնել մեր ազգային շահերին, ինչո՞ւ ոչ: Բացասական համարել դա չի կարելի, հատկապես, եթե պետությունն այդ ծրագրերը չի իրականացնում»:

Այս համատեքստում հետաքրքիր զուգահեռներ կարելի է անցկացնել Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում գործող երիտասարդական ՀԿ-ների միջև: ԼՂՀ-ում գործում են 15 երիտա-

սարդական կառույց (դրանց թվում են ոչ միայն երիտասարդական ՀԿ-ները, այլև բուհերի շրջանակներում գործող ուսանողական խորհուրդները, քաղաքական կուսակցությունների երիտասարդական թևերը)։ Մեր հանդիպումները Լեռնային Ղարաբաղի ՀԿ սեկտորի երիտասարդ ակտիվ գործիչների հետ և նրանց կառույցների ծրագրային նպատակների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այնտեղ գործող երիտասարդական կառույցների գերակշռող մասը գործունեության նպատակ է հռչակել հետամուտ լինել հետևյալ հիմնախնդիրներին՝ երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակություն, մշակութային ժառանգության պահպանում, ազգային արժեքների վերհանում, պահպանում, վերարտադրություն, տարածում, քարոզչություն, պատմամշակութային հուշարձանների պահպանություն, քաղաքի մաքրության պահպանում, հայոց լեզվի և գրականության դասընթացների կազմակերպում և այլն։ Նշենք, որ ԼՂՀ-ում գործող ՀԿ-ները, հանրապետության դե յուրե չճանաչված լինելու հետևանքով, զրկված են միջազգային կազմակերպությունների ֆինանսական աջակցությունից և գործում են հիմնականում տեղական ռեսուրսներով։

Այս համեմատությունը թույլ է տալիս փաստել, որ, ***ի տարբերություն ԼՂՀ-ի, Հայաստանի ՀԿ սեկտորը, առավելապես ուղղորդվելով միջազգային կազմակերպությունների դրամաշնորհների թեմատիկայով, զգալիորեն հեռու է ռազմահայրենասիրական և ազգային խնդիրների հետապնդումից։***

Պատահական չէ, որ «Համաշխարհային ուսուցում հանուն

միջազգային զարգացման» կազմակերպության ՀԿ հզորացման ծրագիրն իր 2004թ. փետրվար-մարտ ամիսներին իրականացրած հետազոտության մեջ (347 ՀԿ-ների շրջանում) փաստում է. «ՀԿ-ների 26%-ը խնդրում է դոնորներին ֆինանսավորել ավելի կոնկրետ և շոշափելի ծրագրեր, որոնք առավել նյութական արդյունքներ կունենան և իրական պրոբլեմներ կլուծեն»[1]: ՀԿ-ների ներկայացուցիչների՝ դոնորներին ուղղված այս «առաջարկությունը» ընդհանուր «առաջարկությունների» ցանկում ամենաբարձր ցուցանիշն ունի:

ՀՀ երիտասարդական ՀԿ-ների գերակշռող հատվածը, ի տարբերություն ԼՂՀ երիտասարդական դաշտում գործող ՀԿ-ների, ունի հետևյալ ուղղվածությունը՝ մարդու իրավունքների պաշտպանություն, ժողովրդավարության տարածում, քաղաքացիական հասարակության կառուցում, իրավապաշտպան գործունեության ծավալում, խորհրդատվություն, քաղաքական առաջնորդների պատրաստում, ՀՀ հասարակական-քաղաքական կյանքին երիտասարդների ակտիվության և ներգրավվածության աճի խթանում և այլն[2]:

Նկատենք մի կարևոր հանգամանք ևս: Նշված ՀԿ-ների ղեկավարները և նրանց աշխատակազմն ունեն զգալի մտավոր ներուժ, բարձր քաղաքացիական ինքնագիտակցություն, գործելու պատրաստակամություն, կարողություն, մեծ մասամբ տիրապետում են օտար լեզուների, համակարգչային հմտությունների:

[1] «Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում. 2004 թվականի համեմատական հետազոտություն», Երևան, 2004, էջ 67:
[2] Այս ՀԿ-ների գործունեության արդյունավետության մասին կխոսենք 3.3՝ «Արդյունավետությունը» ենթաբաժնում:

Նրանց մեծ մասը կարևորում է Հայաստանի ու հայ ժողովրդի ինտեգրումը համաշխարհային հանրությանը, առաջադեմ արևմտյան արժեքներին հաղորդակից լինելը: Այս ՀԿ-ները որպես ֆինանսավորման աղբյուր մեծ հույսեր չեն կապում պետական կառույցների հետ: Նրանց գործունեությունը մեծ մասամբ պայմանավորված է միջազգային կազմակերպությունների դրամաշնորհներով և, ի տարբերություն ռազմահայրենասիրական ու ազգային դաշտում գործող ՀԿ-ների, համեմատաբար բարենպաստ նյութական վիճակում են և կայուն են (ունեն գրասենյակ, վճարովի աշխատողներ, ինտերնետային կայք և այլն):

Ինչ վերաբերում է երիտասարդական դաշտի քաղաքականացվածությանը, ապա մեր զրուցակիցները ներկայումս բարձր են գնահատում դրա աստիճանը:

Երիտասարդական ՀԿ-ների ավելի երիտասարդ գործիչների մի մասը գտնում է, որ դաշտում սերնդափոխության անհրաժեշտություն կա, քանի որ այն լճացել է: Իսկ «ավագ» (նկատի ունենք այն անձանց, ովքեր դաշտում գործում են մոտ 10 և ավելի տարիներ) գործիչները նկատում են, որ իրենք սերնդափոխությանը նպաստող քայլեր են կատարել, ինչը հանգեցրել է դաշտի կուսակցականացմանը: Ահա մեջբերում հարցազրույցից.

– *ՀԿ-ների գործունեության արդյունավետությունը առաջ 80% էր, իսկ հիմա՝ 25-30, քանի որ հիմա շեշտը դրվում է կուսակցականացված երիտասարդության վրա, դա ավելի շատ մեռցնում է երիտասարդական դաշտը: 1997-98թթ. մենք չեզոք էինք գործում: Մենք թողեցինք, որ առողջ սերնդափոխություն գնա, թողեցինք*

երիտասարդների վրա, դաշտը դատարկվեց, այսօրվա գրեթե բոլոր երիտասարդական լիդերները կուսակցական որոշակի կառույցների անդամներ են։

Այս երևույթը, անշուշտ, նկատվում է ՀՀ հասարակական համակարգում, ինչն ուժեղացնում է հասարակական համակարգի կախվածությունն ու ածանցյալությունը ՀՀ քաղաքական համակարգից։ Այդ մասին մենք նշել ենք նաև նախորդ[1] հետազոտության մեջ. «ՀՀ-ում գործող հասարակական կազմակերպություններն ըստ գործունեության ուղղությունների կարելի է տարբերակել մի շարք չափորոշիչներով, այդ թվում՝ ազգայնական և լիբերալ-դեմոկրատական գաղափարախոսական հոսանքին հարող ՀԿ-ներ։ Այդ գաղափարական ուղղվածությունը հիմք է հանդիսանում նրանց (ՀԿ-ների կամ նրանց առաջնորդների) միջև տարբերայնորեն ընթացող պայքարի, որն ածանցյալ է քաղաքական կուսակցությունների հարթությունում ընթացող համանման պայքարից և առայժմ զուրկ է այդ պայքարը ինքնուրույն ղեկավարելու կամ ուղղորդելու ունակությունից»[2]։

Մի դիտարկում ևս. այն ՀԿ-ների երիտասարդությունը, որոնք ավելի մոտ են կանգնած քաղաքական իշխանության մաս կազմող կուսակցություններին, անկասկած, ավելի լայն հնարավորություններ և հիմնավորված հույսեր ունեն հետագայում պետական կառույցներում ազդեցիկ դիրքեր գրավելու առումով։ Ընդդիմադիր դաշտում գործող կուսակցություններին հարող ՀԿ-ների

[1] Վարդանյան Թ., ՀՀ հասարակական համակարգի հիմնախնդիրներն արդի փուլում, «Նորավանք» ԳԿՀ «Հայաստան – 1» տեղեկագիր, Երևան, 2004, էջ 3-27։
[2] Վարդանյան Թ., նշվ. աշխ., էջ 25։

երիտասարդ գործիչները գոնե առայժմ այդ ակնկալիքները չունեն: Այնուամենայնիվ, որոշակի գաղափարախոսությանն ու նպատակներին վերջիններիս ծառայելու պատրաստակամությունն ու նվիրվածությունն ամենևին էլ պակաս չէ:

3.2 Ակտիվությունը

Ինչպես նշել ենք 1.2՝ «Աշխատանքի մեթոդաբանությունը» ենթաբաժնում, մինչև 01.01.2004թ. ՀՀ արդարադատության նախարարությունում պաշտոնապես գրանցված են եղել 216 երիտասարդական ՀԿ-ներ, որոնցից սույն ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են ավելի քան 130-ը:

Ուսումնասիրության ենթարկված երիտասարդական ՀԿ-ները՝ ըստ գործունեության ակտիվության և մշակված չափորոշիչների, բաժանվել են հետևյալ կերպ.

- *Առավել ակտիվ*
- *Բավական ակտիվ*
- *Միջին ակտիվության*
- *Պասիվ*
- *Չգործող*

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ***երիտասարդական ՀԿ-ների մոտ 37,3%-ը չի գործում ընդհանրապես:*** Հավանաբար, այս տոկոսն իրականում ավելին է, քանի որ, այսպես կոչված, «չգտնված» ՀԿ-ների շրջանում, անկասկած, չգործողները մեծամասնություն են կազմում:

Պասիվ է գործում 11,1%-ը: Այս խմբում հիմնականում

հայտնվել են այն ՀԿ-ները, որոնց գործունեությունը սահմանափակվել է մեկ կամ երկու ծրագրով: Դրանք հիմնականում չունեն մշտական գործող գրասենյակ, ինտերնետային կայք, վճարովի աշխատողներ, ֆինանսական կայուն աղբյուրներ: Կան նաև այնպիսիներ, որոնք նախագահների կամ անդամների զբաղվածության կամ հանրապետությունից բացակայության պատճառով ժամանակավորապես չեն գործում, բայց և պաշտոնապես չեն դադարեցրել իրենց գործունեությունը՝ սպասելով «բարենպաստ ժամանակների»:

Միջին ակտիվության է ՀԿ-ների 17,5%-ը: Այս խմբի ՀԿ-ները հիմնականում աչքի են ընկնում շահառուների կամ գործունեության ոլորտի ու խնդիրների սահմանափակությամբ, բայց և հստակությամբ: Այս խմբում են նաև նորաստեղծ ՀԿ-ները, որոնք թեպետ աչքի չեն ընկնում իրականացրած ծրագրերի առատությամբ, սակայն ապագայում ակտիվ գործելու ներուժ ունեն:

Բավական ակտիվ է 18,2%-ը: Այս ՀԿ-ների մեծ մասը լուրջ գործունեություն է ծավալել: Այս խմբում են մեծ մասամբ նեղ մասնագիտական ոլորտում (ասենք՝ տնտեսագետների, իրավապաշտպանների, բնապահպանների և այլն) գործող մի շարք ՀԿ-ներ: Դրանք հիմնականում ունեն գրասենյակներ, մշտական գործող աշխատակազմ (հաճախ՝ վճարովի), կապեր տարբեր ՀԿ-ների հետ, անդամների թիվը հասնում է 80-150-ի: Եթե այդ ՀԿ-ները գործում են մարզերում, ապա նրանց մասին հասարակական շրջանակներում բավական տեղյակ են:

Առավել ակտիվ է 15,9%-ը: Այս խմբի ՀԿ-ները հիմնականում

ունեն գրասենյակ (երբեմն՝ գրասենյակներ և մասնաճյուղեր մարզերում), ինտերնետային կայք, վճարովի աշխատակազմ, կայուն ֆինանսական աղբյուր(ներ)։ Նրանց ղեկավարները ճանաչված անհատներ են, հաճախ՝ ոչ միայն ՀԿ դաշտում։ Քաղաքականացված ՀԿ-ներն այս խմբում ավելի մեծ թիվ են կազմում, քան այլ խմբերում։ Այս խմբի մեջ են ընդգրկված նաև միջազգային փոխանակման ծրագրեր իրականացնող երիտասարդական ՀԿ-ները, որոնց շահառուները մեծաթիվ են, իսկ ծառայությունները՝ հիմնականում վճարովի։ Այս խմբի մեջ են նաև այն ՀԿ-ները, որոնք սերտ կապեր ունեն կա՛մ պետական կառույցների, կա՛մ տարբեր միջազգային կազմակերպությունների հետ, կա՛մ էլ հանդիսանում են միջազգային ցանցային կառույցների ներկայացուցիչներ։ Հաճախ հենց այս խմբի ՀԿ-ներն են, որ հանդես են գալիս դաշինքների ստեղծման նախաձեռնություններով, միաժամանակ ակտիվ համագործակցում են նմանատիպ ՀԿ-ների հետ թե՛ տարածաշրջանային, թե՛ միջազգային կտրվածքով։

Հավանաբար, այս հատվածի ՀԿ-ներին են վերաբերում մեր զրուցակիցներից մեկի հետևյալ խոսքերը.

– *ՀԿ-ների լուրջ դաշտ չունենք, բայց կա ձևավորված ավանգարդ, որը շոգեքարշի դեր կկատարի, կտանի մնացածին, որովհետև ինչպես մյուս դաշտերը, մենք այսօր մրցակցության դաշտում ենք գործում։ Մրցունակ ՀԿ-ներն են հաղթելու ու կյանք ունենալու ապագայում։*

3.3 Արդյունավետությունը

Ըստ սույն ուսումնասիրության 3-րդ՝ «Երիտասարդական ՀԿ սեկտորը» կետում ներկայացված դասակարգման (8 հիմնական խմբեր), մի շարք երիտասարդական ՀԿ-ներ աջակցում են արտասահմանյան երկրների հետ փոխանակման տարբեր ուսուցողական, աշխատանքային ծրագրերին: Առկա սոցիալ-տնտեսական խնդիրները հաշվի առնելով՝ կարելի է նշել, որ այս ծրագրերի շրջանակներում ուսանողներին մեծ աջակցություն է ցույց տրվում, քանի որ ծրագրին մասնակցող շահառուները հնարավորություն են ստանում որոշակի գումար վաստակել արտերկրում և զգալիորեն բարելավել իրենց նյութական վիճակը: Հատկապես կարևորվում է ուսանողների հիմնական խնդրի լուծման՝ ուսման վարձերի վճարման նպատակով նման աշխատանքային ծրագրերի իրականացումը, ինչպես նաև մասնագիտական ունակությունների, անգլերենի իմացության մակարդակի բարձրացումը, շփումը այլազգի երիտասարդների հետ, փորձի փոխանակումը: Ժամանակավորապես լուծվում է նաև երիտասարդության զբաղվածության հարցն ամառային արձակուրդներին: Այս ամենն, անկասկած, դրական երևույթներ են: Նման ՀԿ-ների ֆինանսական կայունությունն ապահովվում է վճարների միջոցով, որոնք գանձվում են շահառուներից՝ ծրագրերին մասնակցելու հնարավորություն ստանալու, փաստաթղթային ձևակերպումների դիմաց:

Ցավոք, ինչպես նշում են նաև այդ ՀԿ-ների նախագահները, սա նույնպես ճանապարհ է, որի միջոցով տեղի է ունենում երիտասարդների արտահոսք ՀՀ-ից: Այդ ՀԿ-ների նախագահների

խոսքերով, ընդհանուր առմամբ, մեկնողների մոտ 15-20%-ը չի վերադառնում (նշենք, որ ընդամենը մեկ անգամ հնչել է նաև այն միտքը, որ մեկնողների 80-90%-ը չի վերադառնում)։ Այս խմբին պատկանող ՀԿ-ներից մեկի ղեկավարը նպատակ ունի իրականացնել երիտասարդների վերադարձի կազմակերպման ծրագիր։ Նա նշում է, որ կան բազմաթիվ դեպքեր, երբ երիտասարդը ցանկանում է վերադառնալ հայրենիք, բայց չունի համապատասխան ֆինանսական միջոցներ, բացի այդ, մեկնելուց հետո անմիջապես չվերադառնալու պատճառով դուրս է մնացել բուհից և այլն։ ՀԿ ղեկավարն այս ծրագրի իրականացումը հնարավոր է համարում միայն պետական համապատասխան մարմինների աջակցության շնորհիվ։

Նման ՀԿ-ների գործունեության նպատակները հիմնականում հետևյալն են՝ մշակութային կապերի ընդլայնում, երիտասարդների բարեկամության հաստատում, կրթամշակութային փոխանակում, այս կամ այն օտար լեզվի (հիմնականում՝ անգլերեն) կատարելագործում և այլն։

Արդյունավետության, հասարակական պահանջներին մոտ լինելու տեսակետից նկատվում են Երևանում և մարզերում գործող երիտասարդական ՀԿ-ների գործունեության հետևյալ առանձնահատկությունները։ Ինչպես նկատում են մեր հարցազրույցների մասնակիցներից շատերը, մարզերում ՀԿ-ներն ավելի մոտ են կանգնած հասարակական խնդիրներին, քան Երևանում գործողները.

– *Վանաձորի բոլոր թվով վեց երիտասարդական ՀԿ-ներն ակտիվ են։*

– *Գյումրիում ՀԿ-ներն ավելի մոտ են հասարակությանը, քան Երևանում։*
– *Մենք մարզում (Սյունիքի մարզ) հիմնական որոշումների կայացման գործընթացին միշտ մասնակցում ենք։*

Դրա պատճառն այն է, որ մարզերում և գյուղական վայրերում մարդկանց միջև շփումներն ավելի սերտ են, բոլորը ճանաչում են իրար, տեղյակ են թե՛ համայնքին հուզող ընդհանուր խնդիրներին, թե՛ ՀԿ-ների կողմից իրականացվող ծրագրերին։ Այսինքն՝ մարզերում հասարակության ընդհանուր բևեռացումն ավելի թույլ է, քան Երևանում։ Կարևոր է նաև այն, որ մարզերի երիտասարդական ՀԿ-ներն ավելի են ներգրավված համայնքային զարգացման և սոցիալական ծրագրերում, որտեղ արդյունքներն առավել տեսանելի են։

Արդյունավետության խնդրի համատեքստում ՀՀ և ԼՂՀ երիտասարդական դաշտում գործող ՀԿ-ների գործունեությունը զուգահեռաբար դիտարկելիս, տեսնում ենք, որ վերջիններիս իրականացրած ծրագրերն ավելի հստակ են, առարկայական, համապատասխանում են տեղական կարիքներին, այսինքն՝ արդյունք են ձևավորված և արտահայտված հասարակական պահանջների։ Հետևաբար, այդ ՀԿ-ների գործունեությունն առավել արդյունավետ է ծախսված ռեսուրսների (նկատի ունենք թե՛ ծրագրի իրականացմանն անհրաժեշտ ժամանակահատվածը, թե՛ մարդկային և թե՛ նյութական ռեսուրսները) տեսակետից։ Ընդ որում, կրկին փաստենք, որ, ի տարբերություն ՀՀ-ի, ԼՂՀ-ում գործող ՀԿ-ները զրկված են միջազգային դոնորների ֆինանսավորումից։

Ինչ վերաբերում է ՀՀ-ում գործող երիտասարդական կառույցների իրականացրած ծրագրերում մեծ տեղ գտած մարդու իրավունքների, քաղաքացիական հասարակության ձևավորման, իրավապաշտպան գործունեության, ժողովրդավարության տարածման, երիտասարդների ակտիվության խթանման, կանանց, երեխաների իրավունքների, սեռական կամ ազգային փոքրամասնությունների պաշտպանության թեմաների առատությանը, ապա նկատելի է, որ դրանք զգալիորեն պայմանավորված են միջազգային դոնորների գերակայություններով և նրանց հայտարարած դրամաշնորհների թեմատիկայով:

Այդ մասին են փաստում մեր զրուցակիցները նույնպես.

- *ՀԿ-ներն ավելի մոտ են միջազգային կազմակերպություններին, քան պետությանը:*
- *ՀԿ-ները փորձում են հարմարվել դոնորների ծրագրերին: Համոզում են, որ իրենք հենց այդ ծրագրի համար էլ ստեղծվել են, ճչան անուններ են դնում՝ հանուն մարդու իրավունքների, ժողովրդավարության տարածաշրջանային կենտրոն և այլն:*
- *ՀԿ-ներն աշխատում են համադրել դոնորների և շահառուների պահանջները, բայց դա շատ դժվար է:*
- *Տեղի է ունենում մշակութային ներհոսք, շատ բան կախված է ՀԿ-ներից, պետք է հաշվի առնել ազգային նկարագիրը: Կան ՀԿ-ներ, որ ծրագիր են անում անկախ իրենց սկզբունքներից ու նպատակներից՝ ըստ գրանտի թեմայի:*

ՀԿ-ների գործունեության կողմնորոշվածությունն ըստ դոնորների դրամաշնորհների թեմատիկայի և գերակայությունների, անկասկած, բացասաբար է ազդում աշխատանքի արդյունավե-

տության վրա, հեռացնում է ՀԿ-ներին հայ հասարակության հիմնախնդիրներից՝ թուլացնելով տեղական համայնքի աջակցությունն իրենց գործունեությանը: Ինչպես նշում են «Համաշխարհային ուսուցում» կազմակերպության հետազոտողները, «վերջին երեք տարիների ընթացքում տեղական համայնքի (տեղական գործարարներ, տեղական կառավարություն, հարուստ հարևաններ, ՀԿ անդամներ, շահագրգիռ խումբ) աջակցությունն ընդհանուր առմամբ նվազել է 2001 թվականի համեմատ»[1]:

Թեպետ մի շարք ՀԿ-ների կողմից նշված թեմաների ընտրությունը հիմնականում ուղղորդվում է դրսից, այնուամենայնիվ, դրանց ուսումնասիրումը, քննարկումը նույնպես կարևոր են, հատկապես մեր երկրի համար: Երկրի անկախության վերականգնումը, պետականակերտման գործընթացները, բնական է, նոր խնդիրներ են դրել մեր ժողովրդի առջև: Ներկա փուլում պետության կայացման, ամրապնդման, զորեղացման գործընթացում կարևորվում է ամեն մի քաղաքացու անմիջական մասնակցության անհրաժեշտության գիտակցությունը:

Վերը նշված հայաստանյան երիտասարդական ՀԿ-ները լուրջ ներդրում ունեն երիտասարդների ակտիվության խթանման, երկրի քաղաքական ու հասարակական կյանքին ներգրավվածության ու մասնակցության համար նպաստավոր դաշտ ձևավորելու, նրանց իրավական ինքնագիտակցության աճի և մի շարք այլ կարևոր խնդիրների տեսակետից: Ինչպես նշում է մեր

[1] «Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում. 2004 թվականի համեմատական հետազոտություն», Երևան, 2004, էջ 82:

զրուցակիցներից մեկը, «ՀԿ-ներն արդյունավետ են գործում, քանի որ հնարավորություն են տալիս երիտասարդներին ինքնահաստատվել կյանքում, հավաքվել իրենց հուզող պրոբլեմների շուրջ և միասին լուծումներ գտնել, ազատ արտահայտվել, նաև սովորում են թիմով աշխատել»: Այսինքն՝ կարելի է նշել, որ գործող երիտասարդական ՀԿ-ների զգալի մասը կարևոր գործառույթ է իրականացնում երիտասարդ կադրերի որոշակի կազմակերպչական ունակությունների, հմտությունների, մտավոր ներուժի, կարողունակության, մասնագիտական աճի, զբաղվածության, ռեսուրսների համախմբան ու կենտրոնացման ուղղությամբ:

Ներկայումս Հայաստանի երիտասարդական դաշտում բավական արդյունավետ գործում են այն ՀԿ-ները, որոնց հաջողվել է մեկ կամ մի քանի ծրագրերի շրջանակներում երկխոսության դաշտ ձևավորել անգամ տարբեր կուսակցությունների անդամ և գաղափարական հակադիր կողմնորոշումներ ունեցող երիտասարդների միջև: Անկասկած, սա կարևոր քայլ է կառուցողական մթնոլորտի ձևավորման տեսակետից: Մասնավորապես, եթե հաշվի առնենք այն, որ այսօրվա երիտասարդները կերտելու են Հայաստանի ապագան, ապա նրանց միջև շփման, համատեղ գործունեության ծավալման նպատակով որոշակի քայլերի ձեռնարկումը բխում է նաև ազգային ընդհանուր շահերից: Ընդ որում, դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ձևավորված շփումները պահպանվում են նաև առօրյա կյանքում: Երիտասարդությունն առավել հաճախ է օգտվում ինտերնետից, ինչը հնարավորություն է տալիս ունենալ մշտական անխափան շփումներ օն լայն (*on-line*) ռեժիմով: Համա-

կարգչային տեխնիկայի զարգացման պայմաններում իրականացվում է անսահմանափակ քանակությամբ սպառողների միաժամանակյա շփում, տեղեկատվության, մտքերի, կարծիքների փոխանակում, այս կամ այն հասարակական, քաղաքական կարևոր իրադարձության շուրջ բանավեճերի ծավալում և այլն:

Այսինքն՝ աստիճանաբար ձևավորվում է ակտիվ երիտասարդության զգալի հատված, որն աչքի է ընկնում շարժունակությամբ (մոբիլությամբ), ընթացիկ հասարակական, քաղաքական դեպքերին արագ արձագանքելու ունակությամբ: Այդ երիտասարդության մի մասը որոշակի քաղաքական հայացքներ է հետապնդում, իսկ գերակշռող հատվածն առանձնանում է քաղաքացիական պարտքի զգացումով, ինքնուրույնության, ազատության ձգտող և իր ապագան կերտելու պատրաստակամությամբ: Կա կարծիք, որ «ի տարբերություն ավելի տարեց քաղաքական գործիչների, երիտասարդ քաղաքական գործիչներն ավելի գաղափարականացված են, այսինքն՝ կրողն են այն կուսակցության գաղափարախոսության, որը ներկայացնում են: Հետևաբար, քաղաքական համակարգի առողջացման հույս կա»:

Հետաքրքրական է այն մարտավարությունը, որ որդեգրել են մի շարք ՀԿ-ներ: Նրանց ներկայացուցիչները նշում են, թե իրենք աշխատում են դոնորների պահանջները մոտեցնել մեր հասարակության հիմնախնդիրներին[1]: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նման համադրման (կամ նման մեթոդով աշխատանք-

[1] Այս մասին դաշտային նյութերն ամփոփված են 4.2՝ «Միջազգային կազմակերպությունները ՀԿ սեկտորի ընկալմամբ» ենթաբաժնում:

ների կազմակերպման) արդյունավետությունն ավելի տեսանելի է հատկապես համայնքային զարգացման ծրագրերի իրականացման (ասենք՝ ինտերնետ կապի ապահովման, տարբեր կենցաղային խնդիրների լուծման, սոցիալական օգնության, անգլերենի ուսուցման դասընթացների կազմակերպման, երիտասարդության շրջանում զբաղվածության ապահովման, փոքր և միջին ձեռներեցության զարգացման և այլն) տեսակետից: Այսինքն՝ այն ծրագրերում, որոնց շրջանակներում իրականացվում են կոնկրետ միջոցառումներ՝ ելնելով տեղական կարիքներից և հիմնականում սոցիալական ոլորտում: Այս ծրագրերի միջոցով լուծվում են պետության և հասարակության առջև ծառացած հիմնականում կարճաժամկետ խնդիրներ: Ինչ վերաբերում է երկարաժամկետ խնդիրներին, ապա դրանց լուծմանն աջակցել հնարավոր է միայն համայնքների զարգացմանն ուղղված՝ պետության կողմից մշակված ռազմավարության համատեքստում իրականացվող ծրագրերի միջոցով:

Ըստ ՀԿ-ների ստեղծման դրդապատճառների, երրորդ խմբին պատկանող (այսինքն՝ միջազգային ցանցային կառույցների ներկայացուցչություններ հանդիսացող) ՀԿ-ները բավական ուշագրավ գործառույթ են իրականացնում մեր ուսումնասիրման խնդիրների տեսանկյունից: Նախ նշենք, որ այս կառույցներն առավել քան արդյունավետ են գործում, քանի որ հիմնականում ֆինանսական աջակցություն ստանալով մայր կազմակերպությունից՝ ունեն մշտական ֆինանսավորում, մտահոգված չեն դրամաշնորհ հայթայթելու խնդրով, ինչը չի կարելի ասել առաջին, երկրորդ և չորրորդ խմբերին պատկանող ՀԿ-ների մասին:

Այս խմբին պատկանող հայաստանյան ՀԿ-ները հիմնականում չունեն գործունեության սեփական (այսինքն՝ Հայաստանում մշակված) ռազմավարություն և մարտավարություն, հաճախ հանդես են գալիս որպես ուղղակի միջնորդ հայ հասարակության և միջազգային ցանցային կառույցների միջև: Վերջիններս հատկապես գործում են և հայտնի են որպես մարդու իրավունքների պաշտպանության համար ողջ աշխարհում մղվող պայքարի կարևոր օղակներ: Հաճախ նրանք կարող են ոչ միայն քննարկել, գնահատել, այլև որոշակի ազդեցություն ունենալ տարբեր երկրների ներսում ընթացող (հաճախ ազգային անվտանգության հարցերին վերաբերող) իրադարձությունների վրա: Բերենք բազմաթիվ օրինակներից միայն մեկը:

Այսպես. երբ 1999թ. աշնանը Ռուսաստանի Դաշնային անվտանգության ծառայության աշխատակիցները լրտեսության մեղադրանքով ձերբակալել էին Ռուսաստանի Ազգային ակադեմիայի (*РАН*) Կանադայի և ԱՄՆ ինստիտուտի ռազմատեխնիկական և ռազմատնտեսական սեկտորի վարիչ Իգոր Սուտյագինին (վերջինս արտասահման գործուղման ժամանակ ամերիկյան լրտեսական ծառայություններին հաղորդել էր պետական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ ռուսական սպառազինման՝ ռազմավարական հրթիռային համալիրների, ժամանակակից ինքնաթիռների ու տանկերի տեխնիկական հնարավորությունների և այլնի մասին[1]), մարդու իրավունքների պաշտպան համաշխար-

[1] Առավել մանրամասն տե՛ս նաև С. Джанибеков, Закрытые сведения открытой печати, «Северный Кавказ», 12.05.2004.

հային մի շարք կազմակերպություններ բողոքի ակցիա կազմակերպեցին՝ ռուսական իշխանություններին մեղադրելով երկրում մարդու իրավունքների ոտնահարման մեջ: Իսկ Հայաստանում գործող Հելսինկյան ասոցիացիայի աշխատակիցները տարածում էին «անմեղ դատապարտված» Ի.Սուտյագինին պաշտպանող, ցանցային կառույցների կողմից պատրաստված և ինտերնետով ուղարկված հաղորդագրություն, որով կոչ էին անում միանալ ռուսական իշխանությունների դատապարտման գործընթացին: Այսպիսով, առանց գործի մանրամասներին ծանոթանալու, առանց իրողության խորքային վերլուծության, ենթատեքստերի վերհանման, ելնելով արդեն նախօրոք ձևավորված մտակաղապարների (ստերեոտիպերի) տրամաբանությունից, մեր շուրջը գործող սուբյեկտները կարող են վերածվել ազդեցության օղակների և լուրջ դերակատարություն ունենալ հայ հասարակության մեջ այս կամ այն խնդրի վերաբերյալ որոշակի կարծիքի ձևավորման, հետևաբար նաև՝ մեր հասարակության ներսում նոր, «ցանկալի» մտակաղապարների ներդրման գործընթացին:

Ժամանակակից հետազոտողները գտնում են, որ մարդու վարքագծի վրա կարելի է ազդել հին մտակաղապարները նորերի (ցանկալի մտակաղապարների) փոխակերպելու ճանապարհով: Արդեն որոշակի մտակաղապարներով առաջնորդվող անհատն առավել կանխատեսելի է ժամանակակից գլոբալ տեղեկատվական դաշտում գործող սուբյեկտների համար: Ինչպես նշում է Ա.Ցուլաձեն, «Տեղեկատվական պատերազմը զանգվածային և անհատական գիտակցության վերածրագրավորման, վերակոդա-

վորման միջոց է»[1]:

Նոր մտակաղապարների ներդրման հետևանքով զանգվածային գիտակցության դաշտում կարող են փոփոխվել «թշնամու» կամ «բարեկամի» ընկալումները, ինչն, ըստ էության, կարող է այդ մտակաղապարները կրողների շահերին ամենևին էլ չհամապատասխանել:

Այսպիսով, Հայաստանում ՀԿ-ների ստեղծումը խթանող ուժերի գործունեությունն ու նպատակաուղղվածությունը քննարկման առանձին և լուրջ առարկա է, որին մենք կանդրադառնանք նաև 4-րդ՝ «Միջազգային կազմակերպություններ և ՀԿ սեկտոր» բաժնում:

3.4 Երիտասարդական ՀԿ-ները դաշտի երիտասարդ գործիչների գնահատմամբ

Հարցման ենթարկվածների զգալի մասը որպես երիտասարդական ՀԿ-ների առաջնային հիմնախնդիր նշում է սեկտորի սուբյեկտների միջև համագործակցության բացակայությունը, թեպետ վերջին ժամանակներին բնորոշ է ՀԿ դաշինքների ձևավորման գործընթացը: Ահա գերակշռող պատասխանները.

- *ՀԿ-ների դաշտը կայացած չէ, համագործակցություն չկա, և չկա տեղ, որտեղ դա ձևավորվի, նույն գործն ենք անում, բայց տեղյակ չենք իրար մասին:*
- *Համագործակցությունը քաղաքական կամ դրամաշնորհային խնդիր լուծելու համար է, լուրջ դաշինքներ չկան:*

[1] Цуладзе А., Большая манипулятивная игра, М., 2000, с. 51.

– *ՀԿ-ների միջև համագործակցությունն անձնական հարաբերությունների կամ քաղաքական հոսանքների ազդեցության ենթատեքստում է, արհեստական է:*

Կուզեի, որ ՀԿ սեկտորը զտվեր, կառույցները խոշորանային, իրար ճանաչեին, միշտ լինի նոր կառույցների ձևավորման հնարավորություն:

ՀԿ-ների միջև համագործակցության ցածր մակարդակն ունի իր պարզ բացատրությունը և համապատասխանում է արդեն նշված առանձնահատկության տրամաբանությանը: ՀԿ-ները հիմնականում ստեղծվում են դրամաշնորհներ ստանալու, այլ ոչ թե հիմնախնդիրներ լուծելու նպատակով, ինչը նպաստում է նրանց միջև ոչ այնքան համագործակցային, որքան առավելապես մրցակցային հարաբերությունների ձևավորմանը: Եթե ՀԿ գործունեության ընթացքում կարևորվում է հասարակական հիմնախնդիրների կարգավորումը, ապա «ՀԿ–ՀԿ» համագործակցությունը պետք է ձեռնտու լինի, քանի որ համատեղ ջանքերը հնարավորություն են տալիս կարգավորել դրանք: Իսկ եթե ՀԿ-ն հետապնդում է դրամաշնորհ ստանալու նպատակ, ապա նույն դաշտում գործող մյուս բոլոր ՀԿ-ները, բնականորեն, դառնում են նրա մրցակիցները:

Որպես ասվածի հետևանք՝ նշենք մեկ այլ նկատելի առանձնահատկություն ևս. ՀԿ-ները այս կամ այն դոնորի հետ աշխատելիս փորձում են մենաշնորհային դիրքեր հաստատել: «Ամեն ինչ անում են, որպեսզի մյուս ՀԿ-ները այդ նույն աղբյուրներից չսնվեն: ՀԿ դաշտում մենաշնորհային քաղաքականությունը մեծ պրոբլեմ է, դա կարող է դեգրադացնել դաշտը»,- նշում է մեր

հարցազրույցի մասնակիցներից մեկը։

Ավելացնենք, որ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից խրախուսվում են համատեղ ներկայացվող դրամաշնորհային ծրագրերը։ Դա փաստում է, որ դոնորները նույնպես հասկացել են այս խնդրի առկայությունը ՀՀ ՀԿ դաշտում և սկսել են կիրառել ՀԿ-ների համագործակցությունը խթանող տարբեր մեխանիզմներ։ Որպես նման մեխանիզմ կարելի է դիտարկել նաև վերջերս՝ 2004թ. հոկտեմբերին Ամերիկյան միջազգային զարգացման գործակալության (*USAID*) շրջանակներում գործող «Համաշխարհային ուսուցում» (*Worldlearning*) կազմակերպության ջանքերով կազմակերպված «ՀԿ-ցուցահանդեսը»։ Դրա նախապատրաստական փուլին մասնակցելու հայտեր ներկայացրած ՀԿ-ները բաժանվել են առանձին բլոկների՝ ըստ իրենց ծավալած գործունեության ոլորտի։ Նպատակն այն էր, որ նույն ոլորտի ՀԿ-ները ցուցահանդեսի նախապատրաստական և ընթացիկ աշխատանքների ժամանակ շփվելու, համատեղ ծրագրերի իրականացման հարցեր քննարկելու, նաև դաշինքներ ձևավորելու հնարավորություն ունենան։

Թեպետ ՀԿ դաշտում ներկայումս ձևավորվել և գործում են մի շարք դաշինքներ՝ բնապահպանական, իրավապաշտպանների (Երևանում), երիտասարդների հիմնախնդիրներով զբաղվող (Գյումրիում), Հարավային բլոկ (Սյունիքի և Վայոց ձորի մարզերում) և այլն, բայց կառույցները հաճախ ուղղահայաց են՝ հիմնված ավելի շատ թույլերի՝ առավել խոշորներին ու կայացածներին ենթարկվելու, քան հավասար գործընկերային հարաբերությունների վրա։

3.5 ՀԿ-ները՝ գլոբալիզացիայի միջնորդ

Քանի որ երրորդ սեկտորը դիտվում է որպես քաղաքացիական հասարակության կայացման անհրաժեշտ նախապայման, ապա հարկ ենք համարում անդրադառնալ, քաղաքացիական հասարակությունը որպես հայ հասարակության զարգացման մոդել դիտարկելու հարցի շուրջ առկա ժամանակակից դիսկուրսին (Ա.Պանարինի բնորոշմամբ՝ «քաղաքացիական հասարակությունը քաղաքացիների և նրանց միավորումների ոչ քաղաքական (տնտեսական, բարոյահոգեբանական, կրոնական, մշակութային) հարաբերությունների ամբողջությունն է՝ հիմնված պետության հանդեպ ինքնագործունեության, ինքնավարության սկզբունքների վրա»[1]: Մոտեցումների հիմնական տարաձայնությունն առնչվում է պետություն–հասարակություն փոխհարաբերությունների բնույթին, որոշումներ ընդունելու գործընթացին լայն հասարակայնության մասնակցության անհրաժեշտությանը, մասնակցության ապահովմանը, ազգային հասարակություն–քաղաքացիական հասարակություն հակաթեզին, ազգայինի և համամարդկայինի հարաբերակցությանը և այլն:

Այսպես, հասարակագետների մի ստվար հատված գտնում է, որ հասարակական սեկտորի կայացումը քաղաքացիական հասարակության ձևավորման անհրաժեշտ նախապայման է: Նրանք նշում են, որ այս խնդիրը խիստ հրատապ է Հայաստանի համար, քանի որ միայն այս ճանապարհով է հնարավոր լուծել մեր բնակչության առջև ծառացած խնդիրների մեծ մասը, հատկապես սո-

[1] Панарин А.С., Политология. О мире политики на Востоке и на Западе, М., 1999, с. 5.

ցիալ-տնտեսական ոլորտում: Ըստ այս մոտեցման, պետությունն ի զորու չէ և չպետք է իրականացնի մի շարք գործառույթներ, որոնք վերապահված են հասարակական սեկտորին: Ունենալով հասարակական ռեսուրսներ՝ ՀԿ-ները կարող են գործել առավել արդյունավետ, ինչը, բնականաբար, պետք է ձեռնտու լինի նաև պետությանը.

– *Պետությունը պետք է աջակցողի դեր ստանձնի, ռեսուրսներ տրամադրի, բայց ոչ թե ուղղորդի: Դրանով մեր ժողովրդին ավելի մեծ օգուտ կտա, քանի որ ՀԿ-ները ավելի ճկուն են, քան պետական մարմինները, ավելի քիչ ռեսուրսներով կարող են ավելի արդյունավետ ծրագրեր կատարել:*

Այս մոտեցման կողմնակիցները կարևորում են հասարակական կազմակերպությունների առջև ի սկզբանե դրված խնդիրը՝ իշխանությունների և հասարակության միջև երկխոսության դաշտի ձևավորումը: Ըստ նրանց, ՀԿ-ները տիրապետում են հասարակական բավականաչափ ռեսուրսների և այն օղակն են, որ կարող են ստեղծել ներքևից վերև ուղղահայաց կապ՝ որոշումներ ընդունելու լիազորությամբ օժտված իշխանական մարմիններին հասարակական պահանջները լսելի դարձնելու նպատակով: Հետևաբար, քանի որ այդ ուղղահայաց կապը հիմնարար և անհրաժեշտ նախապայման է ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության ձևավորման համար, ապա այսօր հրատապ է մեզանում խթանել երրորդ սեկտորի կայացման գործընթացը:

Ուսումնասիրողներից շատերը նշում են նաև այն օրենսդրական միջոցառումները, որոնց կենսագործումը որոշակի դրա-

կան տեղաշարժերի կիանգեցնի այս ոլորտում: Այսպես՝ Գ.Պողոսյանը, քննարկելով ՀՀ-ում հասարակական կազմակերպությունների ոլորտում առկա առանձնահատկությունները, ոլորտի կայացման անհրաժեշտ միջոց է համարում երրորդ սեկտորին (ՀԿ-ներին) երկրորդ սեկտորի (մասնավոր բիզնեսի) աջակցությունը: Նա նշում է. «Երկրորդ սեկտորը պետք է ճիշտ գնահատի իրադրությունը և հասկանա, որ երրորդ սեկտորի զարգացումը շահեկան է նաև իրեն»[1]: Ենթադրվում է, որ երկրորդ և երրորդ սեկտորների հնարավոր դաշինքը պետք է ուղղված լինի առաջինի, այսինքն՝ պետական իշխանական օղակների իրավասությունների սահմանափակմանը:

Ժամանակակից աշխարհում երրորդ սեկտորին տրվում է պետական իշխանական մարմինների հնարավոր միանձնյա կառավարումը խոչընդոտող օղակի՝ զսպաշապիկի դեր:

ՀՀ-ում հասարակական կազմակերպությունների առկայությունն արդեն խոսում է մեզանում ձևավորվող և զարգացող հասարակական շարժման մասին, ինչը տեղական և միջազգային փորձագետների կողմից ընկալվում է որպես հայ հասարակության ժողովրդավարացման ցուցիչ (ինդիկատոր): Ինչպես նշում է Գ.Պողոսյանը, «…ելնելով երրորդ սեկտորի զարգացածության աստիճանից՝ կարելի է դատել տվյալ հասարակության ժողովրդավարացման մակարդակի մասին»[2]:

Հարվարդի Ջ.Քենեդիի անվան կառավարման դպրոցի և Սի-

[1] Погосян Г. А., նշվ. աշխ., էջ 231:
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 221:

րակուզի համալսարանի հետազոտող Ա.Օհանյանն իր հոդվածներից մեկում նույնպես անդրադարձել է Հայաստանի հասարակական սեկտորի հիմնախնդիրներին: Հեղինակը ոչ միայն շեշտադրում է հասարակական կազմակերպությունների նշանակալի դերը քաղաքացիական հասարակության կայացման գործում, նշում ՀՀ-ում երրորդ սեկտորի զարգացման առանձնահատկությունները, այլև ներկայացնում է իր մոտեցումներն ու առաջարկները նշված ոլորտում պետության քաղաքականության վերաբերյալ: Այսպես, իրավացիորեն նկատելով Հայաստանում հասարակություն–իշխանություն կապի բավական թույլ լինելը, իր իսկ խոսքերով՝ նրանց միջև «անջրպետի» գոյությունը՝ Ա.Օհանյանը նշում է, որ անհրաժեշտ է ստեղծել հասարակական կազմակերպությունների համար ներքին ռեսուրսների հնարավորություն՝ որոշակի հարկային արտոնություններ սահմանելով այն անհատների և ձեռներեցների համար, ովքեր կաջակցեն ՀԿ սեկտորին[1]:

Թեպետ երկրորդ և երրորդ սեկտորների համատեղ հասարակական գործունեության իրականացման մասին Հայաստանում դեռ վաղ է խոսել, այնուամենայնիվ, որոշ միտումներ արդեն նկատվում են: Այսպես, 2004թ. մայիսի 11-ին Երևանում տեղի ունեցած հասարակական կազմակերպությունների համաժողովի աշխատանքներին, որն անցավ «Քաղաքացիական կամքը հանուն և ընդդեմ» խորագրով, մեծ հետաքրքրություն և ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում նաև «Ֆերմերային շարժում» հասարա-

[1] Ohanyan A., The Governance Potential of NGOs and Multi-Sectoral Partnerships in Armenian Public Sector: Lessons from Microcredit NGOs of Bosnia and Herzegovina, «Armenian Journal Public Policy», Vol. 1, No. 1, Washington-Yerevan, 2003, p. 139.

կական կազմակերպության ներկայացուցիչները[1]:

Ուշագրավ է, որ հասարակական կազմակերպությունների գործունեությանն անդրադարձել է նաև ՌԴ նախագահ Վ.Պուտինը Դաշնային ժողովի առջև իր տարեկան ելույթում, որտեղ, կարևորելով ՀԿ սեկտորի ստանձնած հասարակական գործառույթը, նշել է, որ «առանց հասուն քաղաքացիական հասարակության՝ մարդկանց հանապազօրյա (հրատապ) խնդիրների արդյունավետ լուծումն անհնար է»[2]: Միաժամանակ, Ռուսաստանի նախագահը, արտահայտելով իր դիտարկումները և գնահատականը երկրում երրորդ սեկտորի գործունեության վերաբերյալ, նշում է, որ «մի շարք հասարակական կազմակերպությունների համար գերակա խնդիր է միջազգային հեղինակավոր հիմնադրամներից ֆինանսներ ստանալը, մյուսների համար՝ կասկածելի խմբակային և առևտրային շահերին ծառայելը, այն ժամանակ, երբ պետության և քաղաքացիների առջև ծառացած սուր խնդիրները նրանց կողմից մնում են լիովին անտեսված»[3]:

Եթե մի շարք հետազոտողներ քննարկում և քննադատում են հասարակական կազմակերպությունների կայացումը, զարգացումն ու հզորացումը խոչընդոտող մեզանում առկա երևույթները, առաջադրում սեկտորի զարգացմանը նպաստող որոշակի քայլեր և օրենսդրական բարեփոխումներ, ապա մյուսները վիճարկում են Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացման

[1] Այս միտումների մասին կխոսենք նաև առանձին 3.7՝ «ՀԿ սեկտոր և բիզնես սեկտոր. համագործակցության սկիզբ» ենթաբաժնում:
[2] Послание Президента РФ Федеральному Собранию. Полный текст, опубл. 26.05.2004. http://www.regnum.ru/allnews/267244.html
[3] Տե ս նույն տեղը:

անհրաժեշտության մասին թեզն ընդհանրապես:

Այսպես, ըստ Ռ.Խուրշուդյանի, «Ազգային անվտանգության բացարձակ առաջնայնությունը թելադրում է հասարակության՝ պետությանը ստորադաս լինելը, ինչը քաղաքացիական հասարակության գաղափարը ներկա փուլում դարձնում է խիստ հարաբերական»[1]:

Դեռևս 1648թ. ստեղծված Վեստֆալյան համակարգը, որն ընկած էր գլոբալ քաղաքականության հիմքում, միջազգային հարաբերությունների առաջնային սուբյեկտ էր դիտարկում ազգ-պետությունները: Ժամանակակից աշխարհը զգալիորեն կերպարանափոխվել է. «հետմոդեռնիստական» համակարգում ակնհայտորեն նվազել է ազգ-պետությունների դերակատարությունն ի հաշիվ վերազգային կորպորացիաների, ցանցային տարբեր կառույցների դերի բարձրացման: Այդ կառույցների կամ խմբավորումների ձեռքում կուտակվել են հզոր լծակներ, որոնց միջոցով հնարավոր է ազդել ցանկացած երկրի թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքականության վրա: Այս կազմակերպությունների գործունեությունն արդյունավետ է դարձնում նրանց ցանցային կառուցվածքը, ինչը հնարավորություն է ընձեռում, համաշխարհային գլոբալ մակարդակով իրականացնել կարևոր գործառույթներ:

Նման ցանցային կազմակերպությունների գործունեության մասին Հարվարդի Քենեդիի անվան կառավարման դպրոցի դեկան Ժոզեֆ Նայը գրում է. «Քանի որ ցանցային կազմակերպու-

[1] Խուրշուդյան Ռ., Արդի հասարակության զարգացման ուղիները, «Հանրապետական», թիվ 6 (15), 2004, էջ 2:

թյունները ներգրավում են տարբեր երկրների ներքին քաղաքական իրադարձություններին քաջատեղյակ քաղաքացիների, ապա նրանք կարող են մամուլի, կառավարությունների ուշադրությունը բևեռել այդ երկրների խնդիրների վրա՝ այդպիսով նոր միջազգային քաղաքական կոալիցիա ձևավորելով»[1]:

Իր գործունեությունն ու ջանքերը քաղաքացիական հասարակության (կամ «բաց հասարակության») կառուցման նպատակի իրագործմանն է ուղղել հայտնի ֆինանսիստ, մեծահարուստ և բարեգործ Ջ.Սորոսը: «Բաց հասարակություն» հասկացությունը շրջանառության մեջ է դրվել անգլո-գերմանական փիլիսոփա Կ.Պոպերի (1902-1985) կողմից՝ ի տարբերություն «փակ», միապետական հասարակությունների, ազատական-ժողովրդավարական հասարակությունները բնորոշելու համար[2]: Իր հոդվածներից մեկում Կ.Պոպերի փիլիսոփայական հայացքների հետևորդ Ջ.Սորոսը խոստովանում է, որ իր նպատակն է ստեղծել «մարդկային հասարակության համընդհանուր ապակենտրոնացման» մոդել և այդ ճանապարհով վերջ դնել «ավանդական պետականության հիվանդ գաղափարին», որն էլ, ըստ նրա, աշխարհի բնակչության մեծ մասի աղքատացման պատճառն է[3]: Այս նպատակի իրականացման համար Ջ.Սորոսը հիմնում է «Բաց հասարակություն» հիմնադրամը, այնուհետև՝ ինստիտուտը, որպեսզի «աշխարհն անցկացնի մսաղացի միջով»[4]:

---

[1] Տե՛ս Նայ Ժ., «NGO-ները փոխում են աշխարհը», «Հայկական ժամանակ», 07.07.2004, նյութը խմբագրությանը տրամադրել է «Project Syndicate»-ը, թարգմ. Ա.Հակոբյանի:
[2] Панарин А.С., Политология. О мире политики на Востоке и на Западе, М., 1999, с. 8.
[3] Дж. Сорос и тайные операции ЦРУ, по материалам журнала Covert Action Quarter, с. 21.
[4] Տե՛ս նույն տեղը:

Այսպես, Ջ.Սորոսն այն քչերից է, ով չի թաքցնում իր գործունեության նպատակներն ու կիրառվող միջոցները. «Այո, ես իրականացնում եմ արտաքին քաղաքականություն… իմ նպատակն է դառնալ աշխարհի խիղճը»[1]: Ինչպես ինքն է խոստովանում, «ցանկացած երկրում ես առանձնացնում եմ մարդկանց մի խումբ, որոնց մի մասը հայտնի է, մյուսը՝ ոչ այնքան, որոնք էլ տարածում են իմ հայացքները»[2]:

Այսպես, իր կողմից ֆինանսավորվող կրթական համակարգի միջոցով Ջ.Սորոսին հաջողվում է պատրաստել, այսպես կոչված, «ազդեցության գործակալների» գործառույթ իրականացնող կադրեր[3]: Ի տարբերություն ավանդական ռազմական «կոշտ ուժի» քաղաքականության, գործունեության այսպիսի «մեղմ» մեթոդի կիրառումն, անկասկած, արտաքին քաղաքականության հարթակում ոչ միայն առավել արդյունավետ է, այլև էժան: Վերազգային կորպորացիաներին՝ որպես ցանցային կառույցների, հաջողվում է իրենց նպատակներին հասնելու համար հմտորեն օգտագործել ցանկացած երկրի ներսում առկա ռեսուրսները: Այդ ռեսուրսները ոչ միայն առանձին անհատներ են, ինչպես նշում է Ջ.Սորոսը, այլև առավելապես հասարակական կազմակերպություններ, որտեղ և իրենց գործունեությունն են ծավալում ներգրավված անհատները: ՀԿ-ների մեծ մասը գործում է թե՛ որպես միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններ,

[1] Տե՛ս H.Coffin, George Soros, Imperial Wizard, Covert Action Quarter, http://www.midiaindependente.org/es/blue/2003/07/259617.htm1, ինչպես նաև htpp:www.canadianimension.mb.ca/extra/d1207hc.htm
[2] Տե՛ս նույն տեղը:
[3] Տե՛ս նույն տեղը:

թե՛ որպես ինքնուրույն ՀԿ-ներ՝ միաժամանակ ֆինանսավորվելով նշված աղբյուրներից:

Այսպես, երրորդ սեկտորի՝ հասարակական կազմակերպությունների ռեսուրսները հաճախ հմտորեն ծառայեցվում են ցանցային կառուցվածք ունեցող վերազգային կորպորացիաների, տնտեսական և քաղաքական տարբեր խմբավորումների շահերին: Այս ամենն իրականացվում է քաղաքացիական հասարակության՝ որպես ժամանակակից աշխարհի համար հասարակական հարաբերությունների ունիվերսալ մոդելի, քարոզչությանը զուգընթաց:

Քաղաքացիական հասարակություն հասկացության հիմքում դրված է հասարակության ապակենտրոնացման, անձի անհատական ազատության, ազգային պետությունների դերի նվազեցման գաղափարը: Ինչպես իրավացիորեն նկատում է Ա.Նեկլեսան, «Հետվեստֆալյան համակարգը հռչակում է (մի կողմից) մարդկային անհատի գերագույն սուվերենությունը, մարդու իրավունքների գերակայությունն ազգային սուվերենության նկատմամբ»[1]: Փաստորեն, հասարակական հարաբերությունների այս մոդելի ձևավորմանն է ծառայում նաև ողջ աշխարհում մարդու իրավունքների գերակայության հռչակման մարտավարությունը:

Ա.Նեկլեսան նշում է, որ «միջազգային-իրավական համակարգում հաճախ դրսևորվում են միտումներ, որոնց իրականացման ընթացքում մարդու իրավունքների պաշտպանությունը ծառայում է որպես ինքնատիպ շղարշ և միաժամանակ այլ նպա-

[1] Неклесса А., Управляемый хаос: движение к нестационарной системе мировых связей, «21-րդ դար», # 3 (5), 2004, էջ 139:

տակների հասնելու արդյունավետ միջոց»[1]:

Խոսելով պետության և ազգի փոխհարաբերությունների, առաջադիմության արդյունքում մարդ-անհատի պարզունակացման ու կազմալուծման (դեգրադացիայի), նաև ինքնատիպ քաղաքակրթության պահպանման կարևորության և օտարածին քաղաքակրթական ազդեցությունների վտանգների մասին՝ պատմաբան Գ.Խուդինյանն անդրադառնում է նաև ազգային արժեքներից օտարված անհատի խնդրին: Նա նշում է, որ «անհատականությունը, զրկվելով ազգային դիմագծից, աստիճանաբար զրկվում է նաև իր գործողությունների գաղափարական ու բարոյական խթաններից (մոտիվացիաներից), այսինքն՝ միջանկյալ օղակի՝ ազգային ես-ի համահարթեցումը հանգեցնում է աղետալի հետևանքների՝ համամարդկային առաջադիմության համար առաջ բերելով հիրավի «բումերանգի էֆեկտ»[2]:

Ի՞նչ վտանգներ է պարունակում ծայրահեղ անհատականացված, ԵՍ-ակենտրոն, ազգային դիմագծից զուրկ, սպառողական մենթալիտետով հասարակությունը: Ազգային շահը երկրորդական համարող, միաժամանակ անձի ազատության անհագուրդ ծարավով լցված հասարակությունն առավել քան խոցելի է ու անպաշտպան: Այս իրադրության մեջ հայտնված հասարակությունը դառնում է սպառողական՝ գերադասելով սեփական բարեկեցությունը համազգային, պետական շահերից: Ա.Նեկլեսայի խոսքերով, «հասարակությունից օտարված, հավակնոտ և սոցիա-

[1] Неклесса А., Управляемый хаос: движение к нестационарной системе мировых связей, «21-րդ դար», # 3 (5), 2004, էջ 140:
[2] Խուդինյան Գ., Հայագիտությունը 21-րդ դարում. ազգային շահերը և հայագիտության նպատակները մրցակցային նոր միջավայրում, մաս 1-ին, «21-րդ դար», # 3 (5), 2004, էջ 33:

լական բնազդով օժտված, ֆրուստրացված անհատը՝ կեցության անկատարության պայմաններում հաճախ գերադասում է դրա ոչնչացումը»[1]: Նման անհատների գոյությունն արդեն վտանգ է ողջ քաղաքակրթության համար, այստեղից էլ սկիզբ է առնում համաշխարհային ահաբեկչությունն իր բոլոր ծայրահեղ ու ողբերգական դրսևորումներով և մարդկության համար աղետալի հետևանքներով: Նման հասարակությունը հեշտությամբ կառավարելի է վերազգային կորպորացիաների և այլ ցանցային կառույցների կողմից:

Իսկ ի՞նչ է առաջարկում Ռ.Խուրշուդյանը մեր հասարակությանը հրամցված քաղաքացիական հասարակության մոդելի փոխարեն: Նա գրում է. «Հայոց նորագույն պետականությունը ձևավորվեց և զարգանում է այնպիսի պայմաններում, որոնց առանձնահատկությունը պահանջում է ***ուժեղ պետության*** գոյություն, ինչը, բնականաբար, նախատեսում է նաև հասարակության՝ պետությանը ստորադաս լինելու հանգամանքը» (ընդգծումը. – Ռ.Խ.)[2]: Հետևաբար, հեղինակի խոսքերով, Հայաստանում պետք է ձևավորել ոչ թե քաղաքացիական, այլ ***ազգային հասարակություն*** (ընդգծումը մերն է):

Այսպես, ԽՍՀՄ փլուզումից հետո հայ հասարակությունը, հայտնվելով նոր հասարակական հարաբերությունների ձևավորման, հնի փոխակերպման իրավիճակում, ներկա փուլում հայտնվել է միաժամանակ տարբեր մոդելների ազդեցությունների կի-

[1] Неклесса А., նշվ. աշխ. էջ 143:
[2] Տե՛ս Խուրշուդյան Ռ., նշվ. աշխ., էջ 2:

զակետում: Այդ ազդեցությունները վերաբերում են ինչպես պետականության, այնպես էլ հասարակական հարաբերությունների մոդելի ընտրությանը, խնդիրներ, որոնք կախված են նաև մեր հասարակության քաղաքակրթական կողմնորոշումներից, ներկայում տիրապետող գաղափարական հենքից, արժեքային համակարգում գերակայող տարրերից և այլն:

Այս փնտրտուքի արդյունքի վրա ազդեցություն կարող են գործել հետևյալ գործոնները՝ պատմական ժամանակաշրջանի առանձնահատկությունները, ազգային զարգացման կամ կոնսոլիդացման մակարդակը, պետականության հիմքերի ամրությունը, նաև պետության ժողովրդագրական կազմը, ազգային տարաբնակեցման (սփռվածության) գործոնը և այլն: Միևնույն ժամանակ անհնար է հաշվի չնստել աշխարհի համար այսօր ընդունելի դարձած հասարակական մոդելի ստանդարտների կամ գոնե տերմինաբանական առումով դրանց կիրառման հետ:

3.6 Երիտասարդական ՀԿ - ների ներուժը

Առանձնակի ուշադրության է արժանի երիտասարդական ՀԿ սեկտորում ներգրավված երիտասարդների մտավոր ներուժի՝ որպես համայն հայոց ազգային ներուժի, բաղադրամասի նպատակահարմար (ռացիոնալ) օգտագործման խնդիրը:

Մենք արդեն նշել ենք, որ ՀԿ սեկտորի երիտասարդ գործիչներն ընդհանուր առմամբ աչքի են ընկնում մտավոր բարձր ունակություններով, մասնագիտական կարողություններով, հաճախ՝ առաջնորդներին բնորոշ հոգեկերտվածքով, ունեն շփման լայն

դաշտ: Այսպես, մեկ այլ հետազոտության շրջանակներում իրականացված հարցման արդյունքներով (առանձնացվել էին ՀՀ երիտասարդական ՀԿ դաշտում ակտիվ 40 գործիչներ). բարձրագույն կրթություն ունի հարցվածների 97.5-%ը, 8-ը ասպիրանտ կամ արդեն գիտությունների թեկնածու են: Առաջնորդների 30-%ը ակտիվ տեղեկացված է՝ տիրապետում է որևէ օտար լեզվի՝ ռուսերենից բացի, ինչպես նաև պարբերաբար օգտվում է ինտերնետից[1]:

Հայ երիտասարդներն իրենց բարձր պատրաստվածությամբ առանձնանում են նաև տարածաշրջանային և միջազգային կտրվածքով իրականացվող տարբեր միջոցառումների՝ հանդիպումների, սեմինարների, թրեյնինգների, համաժողովների ժամանակ: Դա նկատելի է հատկապես տարածաշրջանային մակարդակով համեմատություններ անցկացնելիս: Նորից մեջբերումներ մեր հարցազրույցներից.

– *ՀՀ-ում բրիտանական կրթություն ստացած երիտասարդների թիվը մի քանի անգամ գերազանցում է Վրաստանում և Ադրբեջանում նման կրթություն ստացած երիտասարդների թվին: Ընդհանրապես նախկին ԽՍՀՄ տարածքում ամենաշատը Հայաստանում է: ՀՀ-ում կազմակերպությունն ունի 100 անդամ:*
– *4 տարի անընդմեջ Հայաստանում կազմակերպում ենք «Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» ՀՀ բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների միջև: Հաղթող թիմը մեկնում է Վաշինգտոն, այնտեղ մասնակցում մրցույթի: Այս տարի հաղթող է ճանաչվել ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի*

[1] Մխիթարյան Ա., «Կազմակերպված երիտասարդության դերը հասարակական նոր հարաբերությունների ձևավորման գործընթացում», ձեռագիր օրինակ:

թիմը, մեկնել է ԱՄՆ, այնտեղ մրցույթի արդյունքում դուրս եկել եզրափակիչ՝ հետևում թողնելով Ադրբեջանի, Վրաստանի թիմերին։

Գիտական տարբեր ոլորտներում կոչումներ ստացած երիտասարդների մի զգալի հատված ընդգրկված է գիտահետազոտական կենտրոնների աշխատանքներում, հիմնականում բուհերի ամբիոններին կից գործող ՀԿ-ներում (ըստ երիտասարդական ՀԿ-ների վերոնշյալ դասակարգման՝ թիվ 5-ում)։ Այս ՀԿ-ները նույնպես աշխատում են հիմնականում միջազգային տարբեր հետազոտական դրամաշնորհների շրջանակներում՝ իրականացնելով բազմաթիվ հետազոտություններ բնագիտական, հասարակագիտական ոլորտներում։ Եթե այս ամենին ավելացնենք նաև այն երիտասարդներին, որոնք համանման գործունեություն են ծավալում այլ տիպի և ուղղվածության ՀԿ-ներում (ոչ երիտասարդական) և, հետևաբար, դուրս են մնացել մեր հետազոտության շրջանակներից, ապա կստանանք հետևյալ պատկերը. ազգային երիտասարդ ներուժի գործունեության ուղղվածությունը գիտական, հասարակական, երբեմն նաև քաղաքական հարթության վրա նույնպես կողմնորոշվում է միջազգային դրամաշնորհներից ստացված պատվերների թեմատիկայով։

Պարզ է, որ հետազոտողների մեծ մասն այս ճանապարհով լուծում է կենսական խնդիրներ.

– *ՀԿ-ների 99%-ը փողի համար է աշխատում, միայն 1%-ը՝ գաղափարի։ Գոյության միակ լավ բանն այն է, որ կարողանում են դրսից փող բերել, և մտավորականների մի խոշոր մաս կարողանում է իր խելքը ծախել, գոյատևել, այսինքն՝ ազգային պոտեն-*

ցիալի սարսափելի վատնում, որովհետև այն իդեաները, որոնք մենք տալիս ենք դուրս, անսպառ չեն։

Այսպես, ՀԿ-ներում ներգրավված անհատները դրամաշնորհների շրջանակներում իրականացվող ծրագրերի կատարման ընթացքում ***իրենց մտավոր ներուժն ուղղում են այն խնդիրների լուծմանը, որոնք հրատապ են համարվում ոչ թե հայ հասարակության, այլ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից։*** Այս իրադրությունն անթույլատրելի է մեզ համար, քանի որ առանց այդ էլ կանգնած ենք մի կողմից՝ բազմաթիվ խնդիրների լուծման, մյուս կողմից էլ՝ այդ խնդիրների լուծման համար ազգային ներուժի կենտրոնացման անհրաժեշտության հրամայականի առջև։ Եթե ստեղծված իրադրությանը մոտենանք այս տեսակետից, ապա կտեսնենք, որ տեղի է ունենում հասարակական սեկտորում ներգրավված ազգային ներուժի ոչ նպատակահարմար (ոչ ռացիոնալ) օգտագործում։ Այս ներուժը կենտրոնացած է հիմնականում ըստ ստեղծման դրդապատճառների ՀԿ-ների դասակարգման երկրորդ խմբում, քանի որ այդ ՀԿ-ների թիվը Հայաստանում անհամեմատ մեծ է։ Այստեղ ներգրավված է հասարակության բավական ակտիվ և գրագետ հատված, որը հիմնականում ստացված դրամաշնորհների միջոցով լուծում է կենսական խնդիրներ և քիչ է մտահոգված այդ դրամաշնորհների շրջանակներում իրականացվող ծրագրերի արդյունքներով ու հայ հասարակության վրա դրանց ազդեցությամբ (թե՛ դրական, թե՛ բացասական իմաստով)։ Իսկ երբ հասարակական գործունեությունը դառնում է անձի և իր ընտանիքի գոյության պահպանման

ու նյութական կարիքների բավարարման հիմնական աղբյուր, հասարակական կազմակերպությունը տվյալ անհատի համար հետզհետե վերածվում է հիմնական աշխատավայրի, ինչը նույնպես չի համապատասխանում հասարակական գործունեության էությանն ու տրամաբանությանը:

3.7 ՀԿ սեկտոր և բիզնես սեկտոր. համագործակցության սկիզբ

Անցումային երկրներին բնորոշ առանձնահատկություններից է բիզնեսի կամ երկրորդ սեկտորի շոշափելի կախվածությունը պետական համակարգից՝ առաջին սեկտորից: Մեր դեպքում հաճախ օգտագործվում է «սերտաճած» բառը: ՀՀ-ում մանր ու միջին բիզնեսը թույլ է զարգացած, իսկ դրանում ընդգրկվածները հիմնականում ոչ այնքան ինքնուրույն ձեռներեցներ են, որքան խոշոր բիզնեսից ածանցյալ միավորներ:

Հաճախակի հնչած մտքեր.

– *ՀԿ սեկտորը, որպես կանոն, մեծ գումարներ է ստանում բիզնես սեկտորից: Այսինքն՝ բիզնես սեկտորը ի դեմս ոչ-կառավարական կազմակերպությունների տեսնում է իր գործընկերոջը, հանդես է գալիս որպես պատվիրատու: Բայց Հայաստանում քիչ են նման դեպքեր: Մեր բիզնես սեկտորը դեռ դրան պատրաստ չէ, ժլատ են այս առումով, չեն գիտակցում ՀԿ-ների կարևորությունը, համարում են, որ պետության հետ ավելի հեշտ է խնդիրներ լուծել: Բիզնեսը սերտաճած է պետության հետ, ինչը վտանգավոր է: Սա արհեստական վիճակ է:*

Ներքոնշյալ դեպքերը եզակի են.

– *Մենք համագործակում ենք բիզնեսմենների հետ: Մենք կարողանում ենք իրենց հետ աշխատել, քանի որ փող չենք ուզում, այլ փորձի փոխանակման համար: Նաև իրենց համար մարքեթինգային հետազոտություններ ենք անում անվճար և տրամադրում ինտերնետով:*
– *Բայց արդեն բիզնեսմեններ կան, որոնք հովանավորում են ՀԿ-ներին, դա ավելի գործնական է:*

Այսպես են ՀԿ-ները տեսնում խնդրի լուծումը.

– *Գտնում եմ, որ ՀԿ-ն պիտի իրավունք ունենա զբաղվել բիզնեսով,:*
– *Տնտեսական գործունեություն սկզբունքորեն իրավունք չունենք վարել, թեպետ օրենքը թույլ է տալիս, որ ՀԿ-ն հիմնադրի տնտեսավարող սուբյեկտ, սա էլ լրացուցիչ խնդիրներ հարուցող ընթացակարգ է: Բայց դա էլ հակասում է այն նորմին, որ ՀԿ-ները շահույթ չհետապնդող են, թեպետ ֆինանսական կայունության տեսակետից ճիշտ է:*

Հայտնի է, որ ՀԿ գաղափարաբանության հիմքում դրված է հենց այն դրույթը, որ ՀԿ-ները շահույթ չհետապնդող հասարակական հիմունքներով ստեղծված միավորներ են: Հետևաբար, այս տեսակետը խորքում հակասության մեջ է ՀԿ տրամաբանության հետ:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրված մի շարք ՀԿ-ների նախագահներ ղեկավարում են միաժամանակ նաև ՍՊԸ-ներ, ինչը հնարավորություն է ընձեռում որոշակիորեն ապահովել ՀԿ ֆինանսական հոսքերը և գործունեության կայունությունը: «Համաշխարհային ուսուցում» կազմակերպության հետազոտության արդյունքների համաձայն, «ՀԿ-ների 26%-ը ծրա-

գրում է գոյատևել իրենց ՍՊԸ եկամուտների միջոցով»[1]:

Այնուամենայնիվ, ՀԿ-ների շրջանում այսօր արդեն հասունացել է օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտության գաղափարը, քանի որ գործունեության անարդյունավետությունը, ինչպես նշում են մեր զրուցակիցները, հիմնականում պայմանավորված է ֆինանսական աղբյուրների բացակայությամբ: Օրենսդրական բարեփոխումները խթանող գործընթացներին օժանդակում են միջազգային կազմակերպությունները նույնպես: Հավանաբար, գտնում են, որ մոտենում են տեղական ռեսուրսների օժանդակության աճի և փոխարենը՝ դոնորների աջակցության նվազման ժամանակները.

– *Այժմ «ՀԿ կայունություն» ծրագիր ենք իրականացնում «Համաշխարհային ուսուցում» (Worldlearning) կազմակերպության ջանքերով, փորձում ենք դնել 1%-ի օրենքը, որ ամեն բիզնեսմեն իր եկամտից իրավունք ունենա փոխանցել իր ցանկացած ՀԿ-ին:*

Բավական արդյունավետ են գործում այն ՀԿ-ները, որոնք տարբեր դրամաշնորհային ծրագրերի (հիմնականում՝ Ամերիկյան միջազգային զարգացման գործակալության՝ *USAID* շրջանակներում գործող «Եվրասիա» հիմնադրամի) շրջանակներում իրենց գործունեությամբ նպաստում են Հայաստանում մանր ու միջին ձեռներեցության զարգացմանը՝ տրամադրելով ուսուցողական ձեռնարկներ, տեղեկատվություն, կազմակերպելով փորձի փոխանակման դասընթացներ և այլն:

Բերենք մեկ օրինակ.

[1] «Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում...», Երևան, 2004, էջ 81:

– *Կա մի ձեռնարկություն, որ խալաթներ է օգտագործում, իսկ նույն քաղաքում կա մեկ այլը, որ խալաթներ է կարում, բայց իրար մասին չգիտեն։ Կտորը առնում են, տանում կարել տալիս, փոխանակ առնեն կողքի ձեռնարկությունից, ինչն ավելի շահավետ է ժամանակի ու փողի տեսակետից։ Մեր ծրագրի շնորհիվ ենք պարզել։*

Անկասկած, տեղական ռեսուրսների աճի գաղափարը լուրջ քննարկման կարիք ունի։ Եթե այսօր խոսվում է այն մասին, որ միջազգային կազմակերպությունների ծրագրերի թեմատիկան այնքան էլ չի համապատասխանում մեր գերակայություններին կամ գոնե ուժեղ պետություն ունենալու գերագույն նպատակին, ապա ի՞նչ գերակայություններ կունենանք, եթե նրանց փոխարինելու գան հայ ձեռներեցները, այսպես կոչված՝ բիզնես էլիտան։ Բայց սա արդեն ուսումնասիրության առանձին նյութ է (նույնպես հրատապ) և չի ընդգրկվում սույն հետազոտության շրջանակներում։

4. Միջազգային կազմակերպություններ և ՀԿ սեկտոր

4.1 Միջազգային կազմակերպությունների գործունեության ռազմավարությունը ՀՀ-ում

Մենք արդեն խոսել ենք գլոբալ քաղաքականության միտումներից մեկի՝ հասարակական հարաբերություններում քաղաքացիական (անհատականացված) հասարակության ձևավորմանը միտված գործողությունների և հետևանքների մասին։ Դի-

տարկենք, թե նկատվող երևույթներն ինչպես են արտացոլվում ՀՀ-ում հասարակական համակարգի վրա որոշակի ազդեցություն ունեցող միջազգային դոնոր կազմակերպությունների որդեգրած ռազմավարություններում: Այսպես. տեսնենք, թե ինչ միտումներ են նկատվում հետևյալ դոնոր կազմակերպությունների դրամաշնորհների թեմատիկայի ուսումնասիրության արդյունքում:

Հայաստանում ակտիվ գործող Ամերիկյան միջազգային զարգացման գործակալության (*USAID*) շրջանակներում գործող «Եվրասիա» հիմնադրամի և «Համաշխարհային ուսուցում» կազմակերպության միջոցով միայն 2003թ. հայաստանյան հասարակական կազմակերպություններին տրամադրված դրամաշնորհների թեմատիկան այսպիսին է.

- Փաստաբանական ծառայություններ, իրավական պաշտպանվածություն- $365.458
- Ընտրություններ – $ 271.877
- Կանանց հիմնախնդիրներ – $ 194.360
- Մարդու իրավունքներ - $ 98.006
- Հակակոռուպցիոն - $ 63.188
- Մասնավոր ձեռներեցության զարգացում - $ 351.120

  Վերջինիս միջոցները ուղղված են՝

  ◊ *տուրիզմի զարգացմանը*

  ◊ *մարզային առևտրաարդյունաբերական պալատի հզորացմանը*

  ◊ *մարզերում ինտերնետ կապի տարածմանը*

- «Հասարակական կառավարում» (տեղական ինքնակառավարման մարմինների հզորացում) ուղղության համար -$ 261.818
- Քաղաքացիական հասարակության զարգացման համար - $ 109. 617

Միջոցները ուղղված են՝

◊ *ինֆորմացիոն տեխնոլոգիաների, ինտերնետ կապի, ինֆորմացիայի տարածմանը, կապի զարգացմանը:*

Ակնհայտորեն, գերակայում է քաղաքացիական հասարակության, ժողովրդավարության և շուկայական տնտեսության զարգացման ռազմավարությունը:

Նույն մոտեցումները նկատում ենք Ջ.Սորոսի «Բաց հասարակության ինստիտուտի» 2002թ. Հայաստանին տրամադրած դրամաշնորհների ցանկում.

- Քաղաքացիական հասարակություն – 6 դրամաշնորհ
- Իրավաբանական և քրեական արդարադատության ծրագիր – 12 դրամաշնորհ
- Զանգվածային լրատվամիջոցների ծրագիր – 17 դրամաշնորհ
- Կանանց ծրագիր – 15 դրամաշնորհ
- Տեղեկատվական ծրագիր - 29 դրամաշնորհ:

Ակնհայտ է, որ ամերիկյան դոնոր կազմակերպությունների ծրագրերը հիմնականում նպատակաուղղված են մեր հասարակության անհատականացմանը, ատոմիզացմանը[1], իշխանության

[1] Սոցիալական ատոմիզմ, ատոմիզացիա՝ հասարակության պատկեր, որի շրջանակներում անհատները հանդես են գալիս որպես իրարից մեկուսացված ատոմներ, տե ս Панарин А. С., Политология. О мире политики на Востоке и на Западе, М., 1999, с. 308.

ապակենտրոնացմանը (ինչպես տեսնում ենք տվյալներից, տեղական ինքնակառավարման մարմինների հզորացմանը միայն 2003թ. «Եվրասիա» հիմնադրամը տրամադրել է $ 261.818), իսկ տնտեսական ոլորտի ծրագրերը հիմնականում նպաստում են ծառայությունների (սպասարկման) ոլորտի (տուրիզմ, մարզերում ինտերնետային կապ և այլն) և ոչ թե տնտեսության արտադրական ճյուղերի խթանմանը:

Միայն 2002թ. Ջ.Սորոսի «Բաց հասարակության ինստիտուտի» կողմից 17 դրամաշնորհ է հատկացվել զանգվածային լրատվամիջոցների գործունեությանն աջակցելու համար, ինչն իրականում նշանակում է նրանց գործունեության ուղղորդում ու վերահսկողություն միջազգային կառույցների կողմից: Ա.Պանարինը նշում է, որ «Բաց հասարակություն» հասկացությունը... սոցիոմշակութային և գաղափարական ոլորտներում նշանակում է արևմտյան զանգվածային մշակույթի ներմուծման ճանապարհին տարբեր տիպի արգելքների վերացում»[1]: Բնական է, որ արգելքների վերացումը, սոցիոմշակութային և գաղափարական ոլորտներում ազդեցության գործադրումն առանց զանգվածային լրատվամիջոցների ռեսուրսների կիրառման այսօր գրեթե անհնար է:

Այժմ տեսնենք, թե ինչ թեմատիկա կամ ուղղվածություն ունեն եվրոպական դոնոր կազմակերպությունները[2]:

Այսպես, Հայաստանում ակտիվ գործող գերմանական Ֆ.Էբերտի, Ֆ.Նաումանի, հոլանդական Ա.Մոզերի անվան հիմնա-

[1] Панарин А. С., Политология. О мире политики на Востоке и на Западе, М., 1999, с. 8.
[2] Մեր զրուցակիցներից ոմանք նկատել են, որ ամերիկյան դոնորները եվրոպական դոնորներից աջակցություն ստացած ՀԿ-ներին դրամաշնորհներ չեն տալիս:

դրամների գործունեության հիմքում (բացի մարդու իրավունքների, կանանց հիմնախնդիրների, ժողովրդավարացման և այլ թեմաներից) դրված է նաև Հարավային Կովկասի ինտեգրման գաղափարը Եվրամիության օրինակով:

Կարելի է ասել, որ հայոց արժեքային համակարգի վրա ներազդող ամերիկյան ազդեցության վեկտորն ուղղված է մեր հասարակության ատոմիզացմանը, իսկ եվրոպական վեկտորը շեշտադրում է նաև ինտեգրման մոդելի արդյունավետությունը, ինչը ներկայացվում է որպես տարածաշրջանում էթնիկ հակամարտությունների լուծման ուղի: Այսպիսով. ***ակտիվ դերակատարություն ստանձնած միջազգային դոնոր կազմակերպությունների գործունեությունը կարող է ինչ-որ չափով նպաստել քաղաքակրթական մասնատվածության գոյացմանը:***

Մեր կարծիքով, քաղաքակրթական առումով Հայաստանն ունի ուրույն քաղաքակրթական դիմագիծ, այն պետք է դիտարկել որպես «լոկալ քաղաքակրթություն»: Մեկ այլ հանրային հարցման արդյունքում փորձագետների 16%-ը, իսկ հանրության 20.6%-ը պատասխանել էին, որ քաղաքակրթական արժեքների առումով մենք հարում ենք «միանգամայն տարբերվող և ինքնատիպ քաղաքակրթության»[1]:

Նշենք, որ ՀՀ-ում որոշակի գործունեություն են ծավալել նաև իրանական, չինական, ռուսական և այլ ծագում ունեցող կազմակերպություններ: Բացի այդ՝ ՀՀ-ում այդ երկրների դեսպա-

[1] Տե՛ս «ՀՀ տասներեքամյա անկախությունը և ինքնիշխանությունը» , փորձագիտական և հանրային հարցումների արդյունքների ներկայացում, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, հոկտեմբեր, 2004:

նատների աջակցությամբ իրականացվում են մի շարք ծրագրեր՝ հաճախ մշակութային ուղղվածության, որոնց հիմքում նույնպես քաղաքակրթական ազդեցություն գործելու առաքելությունն է:

4.2 Միջազգային կազմակերպությունները ՀԿ սեկտորի ընկալմամբ

Որքանո՞վ են միջազգային կազմակերպությունների ծրագրերը արտահայտում հայ հասարակության պահանջները (կամ շահերը) հարցին տրվել են հիմնականում հետևյալ պատասխանները, որոնք դասակարգել ենք այսպես.

ա. չեն համապատասխանում, քանի որ նրանք իրենց խնդիրներն են հետապնդում (հաճախ է հնչել), կամ՝ քանի որ մեր խնդիրներն իրենք չեն հասկանում.

- *միջազգային կազմակերպությունների ծրագրերը հեռու են մեր խնդիրներից, մանավանդ ամերիկյանը, թղթատարությունը շատ է, շպիոնաժի նման,*
- *դրսից գրանտների մեծ մասը ինչ-որ սեմինարի համար է, գործնական չեն, կորում են ֆինանսներ: Եթե ասենք փող տվեք՝ 1000 ծառ տնկենք, կասեն՝ «չէ», եկեք սեմինար անենք, սովորեցնենք, թե ոնց ծառ տնկենք՝ ֆինանսներ կտան, հետո կմտածենք, ծառ տնկենք, թե չէ: Մենք չենք թելադրում, թե ինչ անենք,*
- *դոնորները ազգային արժեքները քայքայում են, քանդում են ամուր հայկական ընտանիքը,*
- *իրենք ինֆորմացիա են ստանում գրանտների միջոցով,*
- *ընտանեկան բռնություններ են ասում, սեմինարներից հետո մեր ընտանիքները բաժանվում են: Բայց բոլորը գիտեն, որ հայ կինը*

մեր ընտանիքներում սրբացված է: ՍՊԻԴ-ի դեմ գրանտ են տալիս, բայց ավելի են դրանով քարոզում: Հարմարվում ենք ծրագրերին, երբեմն անում ենք այն, ինչ մեզ պետք է: Դոնորները միայն անտեղի վատնում են փողերը, որ ցույց տան, թե գործ են անում, Մեքսիկայում ո՞նց եղավ, հետո կգան, կասեն՝ «դե հետ տվեք»:

– սխալ ծրագրեր կան, օրինակ՝ միասեռականություն, գենդերային խնդիրներ, երեխաների իրավունքներ, մենք կադրեր ենք պատրաստում իրենց համար,
– գրանտների թեմատիկան չի համապատասխանում մեր խնդիրներին, դոնորների հետ աշխատանքը մեզ փորձ է տալիս, մտքեր են գողանում մեզանից, ծանոթներին են տալիս գրանտները,
– միջազգային կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը՝ զրո, արտադրությանն աջակցող ոչինչ չի արվում, միայն սպառմանը, օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտում պետք է ստեղծել փոքր մեքենատրակտորային կայաններ, որպեսզի միջոցներ լինեն: Դոնորները մեզ զրկում են մտածելու իրավունքից, սեփական խնդիրները սեփական ուժերով հաղթահարելու գաղափարից, մեզ մատնում են անգործության,
– դոնորները քաղաքականություն չեն անում, սկզբնական շրջանում՝ միգուցե, բայց հիմա արդեն ամբողջ տեղեկատվությունը տարել են,
– վտանգ կա, որ դոնորները ուղղորդեն ՀԿ-ներին, եթե անընդհատ ֆինանսավորեն,
– մոտ չեն ծրագրերը մեր խնդիրներին: Վերջերս երիտասարդության քաղաքականության ռազմավարական պլան էինք մշակում: Իրենք (դոնորները) կաղապարված են, քանի որ աշխատել են այլ երկրներում: Մենք ասում ենք մեր խնդիրները որոնք են, բայց

իրենց «գլուխը չի մտնում»։

բ. չեն համապատասխանում, քանի որ մենք դեռևս չենք հասունացել (հաճախակի չի հնչել).

– *չի համապատասխանում, դոնորները առաջ են ընկնում, իրենց առաջադրած խնդիրներին մենք դեռևս պատրաստ չենք,*
– *խիստ բացասական եմ գնահատում դոնորների գործունեության արդյունավետությունը, քանի որ մարդիկ պատրաստ չեն այդ գումարներով ճիշտ աշխատել կոնկրետ գաղափարի համար, ոչ թե փողերը գրպանելու, ոչ մի երկրում դոնորները օգուտ չեն տվել միայն իրենց ուժերով, եթե ներսում չկա հասարակական աջակցություն, մենք ներքին հասարակական ոլորտում ոչ մի արտառոց խնդիր չունենք, մենք ունենք նույն խնդիրները, ինչ-որ բոլորը, մենք ազգային խնդիրներ չունենք ներքին քաղաքականության մեջ, արտաքինում՝ունենք։*

դ. կիսով չափ համապատասխանում են (հաճախ է հնչել).

– *կան խնդիրներ, որոնք մեր կառավարությունն ուշադրություն չի դարձնում, իսկ դոնորները կարևորում են, օրինակ՝ կրթության։ Եվրոպական դոնորները կարևորում են մարդու իրավունքների խնդիրները և ավելի մարդասիրական են, ամերիկյաններն ավելի քաղաքականացված են։ Գենդերային ծրագրերը չեն համապատասխանում մեր խնդիրներին,*
– *գրանտների արդյունավետությունը 50% է, կարելի է ավելի ռեալ գործեր ֆինանսավորել, օրինակ՝գովազդային շուկայի զարգացում,*
– *միջազգային կազմակերպությունները դրական են, բայց նայած ում համար, ծանոթով են գրանտներ տալիս,*
– *դոնորները և՛ դրական, և՛ բացասական դեր ունեն, երբեմն $25 հազար են ծախսում որևէ ծրագրի շրջանակներում, բայց հասա-*

րակությունը տեղյակ չէ,

- *դոնորների ծրագրերը համապատասխանում են մեր խնդիրներին, հատկապես սոցիալական ոլորտում, բայց մեթոդները արդյունավետ չեն,*
- *50%-ով համապատասխանում են մեր խնդիրներին,*
- *միջազգային գրանտները երկիրը քայքայում են, թեպետ ես էլ եմ ստացել: Բայց իրավապաշտպան, հաշմանդամների, լրատվական ոլորտներում՝ դրական է, նրանց ուժեղ Հայաստան պետք չէ,*
- *դոնորներն ունեն իրենց հիմնախնդիրները և պահանջները: Կան դոնորներ, որոնք ավելի շատ թղթի վրա են, և ՀԿ-ներին տրամադրված գումարները ետ են գնում իրենց, որոշ դեպքերում իրենց պահանջները չեն համապատասխանում մեր շահերին, օրինակ՝ Սորոսի ֆոնդը կարող է մի պահ օգտակար ծրագիր ֆինանսավորել, մյուս անգամ կարող է քաղաքական նպատակներ ունենալ, որոնք պարտադիր չէ, որ համապատասխանեն ՀՀ-ի շահերին: Բայց կարևոր են իրենց գործունեությունը, ֆինանսական ներդրումները ՀՀ-ում:*

ե. պետք է աշխատել համադրել իրենց պահանջները և մեր հասարակության խնդիրները (հաճախ է հնչել).

- *ես շատ եմ լսել պիտակավորում, որ իբր զարգացող երկրներում միջազգային կազմակերպությունները ներկրում են տարբեր պրոբլեմներ: Գուցե դա էլ կա, բայց եթե մենք չենք ուզում, չպետք է ընդունենք: Օրինակ՝ մենք մինչև չենք ուսումնասիրում ներքին պահանջները, չենք համաձայնվում, անգամ մեթոդաբանական հարցերում,*
- *պետք է կարողանալ մոտեցնել դոնորների ծրագրերը մեր խնդիրներին, ցանկացած ՀԿ կարող է իր կարիքներն այնպես ներկայաց-*

նել դոնորին, որ համապատասխանի դոնորի առաքելությանը, դա գալիս է ՀԿ պրոֆեսիոնալիզմից: Դոնորը իր նպատակն ունի, բայց եթե դու սիրում ես քո ազգը, հասկանում ես ինչ է դոնորը, հասկանում ես՝ ինչպես օգտագործել այդ գումարը… Մեր բոլոր ծրագրերը մոտ են, օրինակ՝ «Եվրասիան» մեզ տվել է գումար համայնքների զարգացմանն աջակցող, Worldvision-ը՝ ՄՊԻԴ-ի կանխարգելման: Բոլորը մոտ են մեր կարիքներին, ՄՊԻԴ-ի մասին ինֆորմացիա ենք տարածում, պետք չէ աչքերը փակել, կա այդ պրոբլեմը: OXFAM-ը աղքատության ծրագիր է անում. մենք գտնում ենք, որ պետք է ստեղծվեն գյուղատնտեսական վերամշակման փոքր ձեռնարկություններ, մենք հրաժարվել ենք Սորոսի երկու 25 հազարանոց ծրագրերից՝ հակածխախոտային ակցիայի վերաբերյալ, քանի որ զգացինք, որ իրենց տարբերակը անարդյունավետ է,

- *կան պարտադրված ծրագրեր, որ պիտի արվեն, նրանք էլ ունեն իրենց շահերը: Կան ծրագրեր, որ համապատասխանում են մեր շահերին, կան՝ որ ոչ: Մենք պետք է այնքան խելամիտ լինենք, որ կարողանանք ծառայեցնել հօգուտ մեզ,*
- *նրանք միայն միջոցներ (գործիքներ) են տալիս, մենք պետք է ճիշտ օգտագործենք, մենք պետք է թելադրենք նաև մեր մեթոդները,*
- *90%-ը իր նպատակներն ունի, բայց հայերս կարողանում ենք ծառայեցնել մեր նպատակներին,*
- *ազգային մշակույթ քարոզող ՀԿ-ներ Գյումրիում ես չգիտեմ, դոնորները չեն ֆինանսավորի այդպիսի ծրագրեր, բայց ՀԿ-ները ճկուն են և կարողանում են հայկական մշակույթը ներդնել:*

զ. համապատասխանում են (հաճախակի չի հնչել).

- *դոնորների անհրաժեշտությունը կա ՀՀ-ում, դրական եմ գնահատում գործունեությունը,*

– *միջազգային կազմակերպություններն օգնում են, ազգը կրթվում է,*
– *դոնորները օգուտ են տալիս Հայաստանի ՀԿ-ներին, չխոսենք, թե նրանք ինչ են շահում դրանից, նրանք երկիր են ներկայացնում և փորձում են մեզ ծանոթացնել իրենց երկրի մշակույթի և արժեքների հետ, դա դրական է,*
– *դրական եմ համարում, նպաստում են ՀԿ-ների գործունեությանը: Ցավալի է, որ մի օր կգնան, եթե OXFAM-ը չլիներ, մենք չէինք լինի,*

5. Պետություն և ՀԿ սեկտոր. համագործակցության անհրաժեշտություն

5.1 Իրադրությունը

ՀԿ սեկտորի հիմնախնդիրներին առնչվող հարցերի և դրանց լուծման առումով պետության դերի, «ՀԿ-պետություն» փոխհարաբերությունների վերաբերյալ հիմնականում հնչել են հետևյալ կարծիքները:

Մեր հարցազրույցների մասնակիցների գերակշռող մասն ակնկալում է պետության աջակցություն ՀԿ սեկտորին: Գտնում են, որ ՀԿ-ների ներուժը, կարողունակությունը պետք է օգտագործել հասարակական պահանջների բավարարման համար: Մեծ մասը կողմ է պետության հետ սերտ համագործակցությանը.

– *ավելի ուրախ կլինենք, եթե մեր պետությունը մեզ ֆինանսավորի, բայց ոչ թե վերահսկելու համար, այլ ուշադրություն դարձնի, քանի որ մեծ ներուժ կա այստեղ,*
– *կուզենայինք պետության հետ համագործակցել, մեզ գնահատեին,*

մի քիչ օգնեին,

- *տեղական գրանտները քիչ են: Պետությունը պետք է ունենա մի փոքր ֆոնդ և համատեղ ծրագրեր անի, որպեսզի իր խոսքը ասի այն ՀԿ-ներին, որոնք ֆինանսավորվում են եվրոպական, ամերիկյան դոնորներից,*
- *եթե ՀԿ-ները իրավական աջակցության, սոցիալական ապահովության, բնապահպանության, կանանց, երիտասարդության հիմնախնդիրների ոլորտներում իրականացնում են բազմաթիվ ծրագրեր, ինչ-որ առումով մեղմում են նաև պետության հոգսը: Այն խնդիրները, որոնք պետք է պետությունը լուծի, ՀԿ-ները շատ դեպքերում վերցնում են իրենց վրա: Պետության շահերից է հզոր ՀԿ համայնք ունենալը, որովհետև եթե այն կա, պետությունը շատ խնդիրներից կարող է դուրս մնալ: Քաղաքակիրթ երկրներում պետության բազմաթիվ խնդիրներ արդեն տեղափոխված են ՀԿ հարթություն: Պետությունը սա չպետք է համարի իր գործերին միջամտելու կոնկրետ դրսևորում: Այս գործառույթների տեղափոխությունը մի դաշտից մյուսը երկուստեք ձեռնտու է, բայց չպետք է դա լինի արհեստական: Դրա պահը պետք է հասունանա, պետությունը և ՀԿ-ները պետք է դրա անհրաժեշտությունը գիտակցեն: Ինչքան մոտ լինեն իրար, այնքան վտանգներ քիչ կլինեն,*
- *պետությունը պետք է օգտագործի ՀԿ-ների ներուժը, թե չէ քաղաքական գործիչները կօգտագործեն ի վնաս պետության:*

Շատերը գտնում են, որ անհրաժեշտ է ձևավորել ՀԿ-ների և պետության համագործակցային հարաբերություններ ՀԿ դաշտի գործունեության արդյունավետության բարձրացման, նրանց գործունեությունը պետական շահերին ուղղորդելու նպատակով: Միաժամանակ նշվում է, որ ՀԿ-ների ինքնուրույնությունն այդ մի-

ջամտությունից չպետք է խաթարվի, որ պետությունը չպետք է կառավարի ՀԿ դաշտը, այլ միայն աջակցի, կարգավորի, ուղղորդի.

– *ՀԿ-ների դաշտը կայացած չէ, համագործակցություն չկա և չկա տեղ, որտեղ դա ձևավորվի: Նույն գործն ենք անում, բայց տեղյակ չենք իրար մասին: Մեր հեղինակությունը բարձր չէ, կա մեծ ներուժ, մենք քաղաքականացված չենք, անհրաժեշտ է պետական կոորդինացիոն մարմին, որպեսզի պետական շահերին ուղղորդված աշխատենք,*
– *ՀԿ-ների լուրջ հայկական կենտրոն է անհրաժեշտ, որը պետք է տարբեր ծրագրերի շրջանակներում աշխատի ՀԿ-ների հետ: Առանձին մասով՝ սկսնակ ՀԿ-ների հետ, առանձին՝ զարգացած, կայացած, որպեսզի ամենքը ինչ-որ բան ստանան ու տան: Ցավոք, այս ամենը չկա, պետությունը ուշադրություն չի դարձնում այս խնդրին: Պետությունը պետք է կարգավորիչի, աջակցողի դեր ստանձնի, ռեսուրսներ տրամադրի, բայց ոչ թե ուղղորդի: Դա մեր ժողովրդին ավելի մեծ օգուտ կտա, քանի որ ՀԿ-ները ավելի ճկուն են, քան պետական մարմինները, ավելի քիչ ռեսուրսներով կարող են ավելի արդյունավետ ծրագրեր կատարել: Ժամանակն է պատրաստել այդ ՀԿ-ներին, բազմաթիվ ծառայություններ (հատկապես սոցիալական ոլորտին առնչվող) պատվիրել իրենց,*
– *կենտրոնը պետք է տեղեկատվություն ապահովի ՀԿ-ներին, որպեսզի իրար մասին իմանան, ծրագրերի մասին տեղեկություններ տան:*

Հնչել են նաև դժգոհություններ և մեղադրանքներ պետական սեկտորի հասցեին.

– *ՀԿ-ներին մեր պետությունը պիտի ֆինանսավորի, բայց տենդերով, ոչ թե ԽՄԲ-ով, հիմա գոնե մշակույթի և երիտասար-*

դության հարցերի նախարարությունը ձգտում է ինչ-որ բան անել, առաջընթաց կա,

– *պետական սեկտորից մեծ հույսեր չունենք, գումարները թափանցիկ չեն բաշխվում,*
– *պրոբլեմներ կան սոցապ նախարարության, կենսաթոշակային ֆոնդի հետ,*
– *միջազգային կազմակերպություններն ունեն իրենց գերակայությունները, բայց իրենք իրենց ծրագրի թեմաները քննարկում են կառավարության հետ: Մեր կառավարությունը պետք է ներկայացնի մեր խնդիրները, բայց մեր պետությունը չունի ինֆորմացիա երիտասարդական դաշտի մասին՝ արժեքների և այլն, քանակական և որակական ինֆորմացիա չկա:*

Ակնհայտ է նաև վստահության պակասը պետական սեկտորի հանդեպ: Կա կարծիք, թե պետության կողմից ՀԿ-ների գործունեությանը ցանկացած միջամտություն անիմաստ է, նույնիսկ՝ վտանգավոր.

– *եթե պետությունը ստեղծի այդ կենտրոնը, շատ կազմակերպություններ կվախենան կորցնել իրենց անկախությունը,*
– *կենտրոնի դերը չեմ տեսնում: Քանի դեռ մեր ՀԿ-ների հարաբերությունները կարելի է որակել որպես մրցակցություն, համագործակցությունն անիմաստ է: Դեռ ընդհանրություններ չկան, ավելի շատ տարբերություններ են,*
– *ինձ ուղարկել են առաջարկ՝ գրանցվելու նախարարության շտեմարանում: Ես գիտեմ սոցիալական ՀԿ-ների համախմբման նախարարության կողմից նման նախադեպ, ինչը դարձավ բազմաթիվ ՀԿ-ների գերեզման: Կոնկրետ ՀԿ-ներ կային, որ աշխատում էին, համախմբվելով գոնտիկի տակ՝ որդեգրեցին որոշակի լրոգ-*

ված քաղաքականություն, և հիմա իրենք էլ չեն պատկերացնում իրենց տեղն ու դերը։

Եթե դիտարկենք ՀԿ-ների հանդեպ պետության բացասական ու անցանկալի մոտեցումների բովանդակությունը, ապա կարելի է ասել, որ Հայաստանում իրադրությունն առավել բարենպաստ է, քան Վրաստանում և Ադրբեջանում։ Մեզ մոտ նախ բավական հեշտացված է ՀԿ-ների գրանցման փաստաթղթային ձևակերպումների գործընթացը՝ սկսած անհրաժեշտ ֆինանսական վճարումներից մինչև ծախսված ժամանակը։ Մեր զրուցակիցները ՀԿ-ների գործունեության ազատության սահմանափակման, ներքաղաքական ճնշումների վերաբերյալ էական դժգոհություններ չեն արտահայտել։ Եթե դիտարկենք ՀԿ-ների գործունեության ազատության աստիճանը Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում, կտեսնենք, որ հարևան հանրապետություններում ՀԿ-ները զերծ չեն հետապնդումներից, ինչպես նաև պետական վերահսկողության փորձերից։ Հատկապես Ադրբեջանում իրավիճակն այս առումով բավական աննախանձելի է։ Ադրբեջանի համապատասխան մարմինների կողմից վերահսկվում է ՀԿ-ների, հատկապես տարածաշրջանային ծրագրեր իրականացնող հատվածի գործունեությունը, քանի որ վերջիններս ակտիվ շփումներ ունեն Հայաստանի ու Վրաստանի ՀԿ-ների ներկայացուցիչների հետ[1]։ Տարածաշրջանային կտրվածքով բազմաթիվ ծրագրեր իրականացնող, մշտական և ակտիվ շփումներ ունեցող երիտասարդական ՀԿ-ներից մեկի նախագահի հավաստմամբ.

[1] Այս կարծիքը հաստատվում է նաև տարածաշրջանում հաճախակի կազմակերպվող հանդիպումների ընթացքում։

– *Հայաստանում պրոբլեմ չկա ներքաղաքական ճնշումների տեսակետից, ի տարբերություն Վրաստանի և Ադրբեջանի:*

Թեպետ Հայաստանում «ՀԿ–պետություն» փոխհարաբերություններին նույնպես բնորոշ է հակադրությունը, այնուամենայնիվ, հիմնական ՀԿ-ներում տիրող դժգոհությունն այն է, որ «պետությունն իրենց անտեսում է»:

Կան նաև «ՀԿ-պետություն» համագործակցության հաջողված օրինակներ: Այսպես.

– *մասնակցել ենք փաստաբանական գործունեության մասին նախագծի մշակմանը, ՀԿ-ների մասին օրենքի առաջին նախագծի մշակման աշխատանքներին՝ 1996թ., 1998թ. ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ մշակել ենք նախագիծ, որը հետագայում բարեփոխվելով ընդունվել է Ազգային ժողովի կողմից: Նախագիծը ստեղծվել է Կովկասյան նախագծի մոդելի հիման վրա, որը քննարկվել է 1998թ. Հարավկովկասյան երեք պետությունների Ստրասբուրգի համաժողովում,*
– *կա համագործակցություն պետական իշխանական մարմինների հետ, տարածքներ են մեզ տվել, քանի որ գնահատել են մեր գործունեությունը: Մեր ռեգիոնում խնդիրներ չունենք, մեր մարզպետը, փոխմարզպետները հասկանում են մեզ, զիջում են, ընդառաջում, լավ հասկանում են ՀԿ սեկտորը,*
– *վերջերս, կարծես թե, պետությունը նույնպես տարբեր կառույցների միջոցով փորձում է ֆինանսավորել մեզ, ինչը ողջունելի է: Մենք տարբեր առիթներով զգացել ենք պետության աջակցությունը՝ ոչ ֆինանսական, այլ խորհրդատվական: Աշխատել ենք Տավուշի և Սյունիքի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:*

5.2 Միջազգային փորձ (ճապոնական մոդել)

Համաշխարհային հանրությունը, հատկապես արևմտյանը, ունի որոշակի փորձ և ծանոթ է ընդհանուր առմամբ ՀԿ գաղափարաբանությանը, թեպետ այնտեղ էլ այդ մասին լայն հասարակական խավերի իրազեկման աստիճանն այնքան էլ բարձր չէ: Ինչպես փաստում են «Համաշխարհային ուսուցում» կազմակերպության հետազոտողները, քաղաքացիական հասարակության փորձագետ, դոկտոր Թեդա Սկոքփոլի հետ ունեցած քննարկումներից պարզվել է, որ «ամերիկացիների մեծ մասը կդժվարանար մեկնաբանել, թե ինչ է ՀԿ-ն»[1]:

Կարծում ենք՝ հետաքրքիր կլինի ծանոթալ «Պետություն-բիզնես-ՀԿ» համագործակցության մոդելի առանձնահատկություններին, այսպես կոչված, «Ճապոնական պլատֆորմի» օրինակով: Անշուշտ, չենք պնդում այս մոդելի՝ մեզանում կիրառելիության անհրաժեշտության կամ հրատապության մասին, հատկապես ամբողջական տեսքով: Բայց չենք բացառում, որ ներկայացված «պլատֆորմի» որոշ տարրեր կամ դրա գաղափարաբանությունը կարող են ուշագրավ լինել մեզ համար:

Ճապոնական հետազոտողներն այս մոդելը համարում են հաջողված և իր բնույթով եզակի[2]: Այն մեկնարկել է 2000թ. Օգոստոսին, ՀԿ-ների նախաձեռնությամբ և իր գործունեությամբ ուղղված է մարդասիրական օժանդակության ծրագրերին միայն

[1] «Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում...», Երևան, 2004, էջ 38:
[2] Akiyama N., Synergy or a Marriage of Convenience: An Emerging Japanesse State-Civil Society Interaction over Humanitarian Assistance Policy, Paper, Research Fellow, Center for the Promotion of Disarmament and Non-Proliferation Japan Institute of International Affairs, p. 4.

(նշենք, որ մեզ համար կարևոր է ոչ թե ծրագրի նպատակը, այլ տվյալ մոդելով կոնկրետ խնդրի լուծման մեխանիզմները։ Դա կարող է լինել ցանկացած այլ ծրագիր, որը գերակա կհամարվի հասարակության և պետության կողմից)։

Մոդելի հիմքում ընկած են երեք միավորների՝ պետություն, բիզնես և ՀԿ սեկտոր, համագործակցային հարաբերությունները՝ դեպի հասարակական պահանջներն ուժեղ կողմնորոշմամբ *(strongest orientation toward public interests)*։ Քանի որ այդ միավորներից յուրաքանչյուրը տիրապետում է գործելու որոշակի հմտությունների, հնարավորությունների, լծակների՝ միևնույն ժամանակ զուրկ լինելով այլ ունակություններից, ապա գործունեության համադրումը զգալի արդյունք է տալիս։

Նշվում է «ճապոնական պլատֆորմի» 2 հիմնական առանձնահատկություն։ Առաջին. այն ավելի շատ ֆորմալ ինստիտուցիոնալ մեխանիզմ է, քան ոչ ֆորմալ ֆորում ինտերակտիվ շփման համար։ Երկրորդ. որպես ֆորմալ ինստիտուցիոնալացման արդյունք՝ նրանում անդամակցությունը սահմանափակ է։

Նախ նշենք, որ Ճապոնիայում մոդելի ստեղծման գաղափարը ծագեց մարդասիրական օգնության ոլորտում մի քանի անհաջողություն ունենալուց հետո, երբ ճապոնական մարդասիրական ՀԿ-ները զիջում էին այլ երկրների ՀԿ-ներին գործունեության արդյունավետության, արագ արձագանքման, տեղեկատվության ստացման տեսակետից։

Ներկայացնենք «ճապոնական պլատֆորմի» կառուցվածքը, որոշումների ընդունման մեխանիզմները, գործառույթները, ֆի-

նանսական աղբյուրները և այլն: «Պլատֆորմը» բաղկացած է երեք մասից՝ ՀԿ-ների միություն, արտաքին գործերի նախարարություն (քանի որ խնդիրն արտերկրում մարդասիրական օգնության ցուցաբերումն է. ընդգրկված նախարարությունը կարող է լինել այլ՝ կախված այն բանից, թե ինչ ոլորտի խնդիր է քննարկվում) և տնտեսական կազմակերպությունների ֆեդերացիա (*Keidanren*), որն ընդգրկում է Ճապոնիայի մասնավոր սեկտորի ներկայացուցիչներին:

ՀԿ-ների միությունը գործադիր մարմին է: Միության շրջանակներում գործում է միության խորհուրդ, որն ունի հետազոտական խումբ: Խմբի ջանքերով որոշվում են առկա խնդիրների առաջնահերթությունները: Այնուհետև խնդիրը բարձրացվում է «պլատֆորմի» կառավարող խորհրդի առջև, որը բաղկացած է նախարարության և բիզնես սեկտորի ներկայացուցիչներից: Համապատասխան թույլտվություն ստանալուց հետո միայն իրականացվում է ծրագիրը:

Մարդասիրական այս կամ այն օգնության ծրագրի իրականացման համար ֆինանսական աղբյուրները գոյանում են մասնավոր սեկտորի ներդրումների հաշվին: Ճապոնիայում տարեկան $4.5 մլն հատկացվում է արտաքին գործերի նախարարությանը մարդասիրական օգնության ցուցաբերման նպատակով[1]: Այսպիսով, թե որտեղ պետք է ծախսվի դրամաշնորհը, որոշվում է տեղական ՀԿ-ների ակտիվ մասնակցությամբ:

[1] Akiyama N., Synergy or a Marriage of Convenience: An Emerging Japanesse State-Civil Society Interaction over Humanitarian Assistance Policy, Paper, Research Fellow, Center for the Promotion of Disarmament and Non-Proliferation Japan Institute of International Affairs, p. 7.

Մասնավոր սեկտորի ներկայացուցիչների մասնակցությունը չի սահմանափակվում միայն ֆինանսական ներդրումներով: Նրանք ակտիվ մասնակցում են նաև ընդհանուր համակարգի կառավարման գործընթացին, աջակցում ՀԿ-ներին մարդասիրական օգնության ցուցաբերման ընթացքում գույքի և այլ անհրաժեշտ միջոցների ձեռքբերման ժամանակ:

Այսպիսով, իրականացվում է կառուցողական համագործակցություն նշված երեք հասարակական սեկտորների միջև: Պետական սեկտորի ներկայությունը կարևոր է իրականացվող ծրագրերի առաջնահերթությունների որոշման գործընթացում: Դա հնարավորություն է տալիս գործել առավելագույնս պետական և ազգային շահերին համահունչ: Բիզնես սեկտորի ֆինանսական կարողությունները և տեխնիկական հնարավորությունները թույլ են տալիս բարձրացնել իրականացվող ծրագրի արդյունավետությունը, օպերատիվությունը: Իսկ ՀԿ-ներում առկա ներուժը՝ մասնագիտական կարողությունները, հմտությունները, ճկունությունը, տեղեկացվածությունը արդյունավետ կիրառվում են համապատասխան ոլորտում:

Բացի այդ, քանի որ ՀԿ-ների ներկայացուցիչներն ըստ էության պետք է առավել մոտ կանգնած լինեն հասարակական խնդիրներին, քան պետական իշխանական մարմինների կամ բիզնեսի ներկայացուցիչները, կարևոր է նրանց ակտիվ մասնակցությունը առկա խնդիրների առաջնահերթությունների որոշման գործընթացում:

6. Երիտասարդական ՀԿ գործիչների արժեքային կողմնորոշումները

6.1 Հայաստանի քաղաքակրթական պատկանելությունը. ՀԿ առաջնորդների մոտեցումները

ՀԿ առաջնորդների հետ անցկացված հարցազրույցների ընթացքում առանցքային հարցադրումներից էր «Ո՞ր քաղաքակրթությանն են պատկանում Հայաստանն ու հայ ժողովուրդը» հարցը: Արդյունքում ի հայտ են եկել մեր զրուցակիցների քաղաքակրթական կողմնորոշումների և ընկալումների վերաբերյալ մի քանի մոտեցումներ:

Հարցվողները հիմնականում գտնում են, որ հայ ժողովուրդը պատկանում է եվրոպական քաղաքակրթությանը, բայց ցավով նշում են, որ դեռևս կան արևելյան քաղաքակրթության տարրեր կամ բաղադրիչներ: Որպես կանոն, արևելյան քաղաքակրթությանը բնորոշ տարրերը որակվում են որպես բացասական (բռնություն, մարդու իրավունքների ոտնահարում, հասարակական հարաբերությունների ցեղակլանային սկզբունքների գերակայություն, կենցաղային անբարենպաստ, ոչ քաղաքակիրթ ապրելակերպ): Արևմտյան քաղաքակրթության բաղադրիչներն են (ըստ հարցվողների) ազատությունը, արդարությունը, բարեկեցությունը, քաղաքակիրթ լինելը: Գերակշռող մասը հույս ունի, որ քաղաքակրթական առումով գնալու ենք դեպի Եվրոպա:

Հարցվողների 10%-ի կարծիքով՝ մենք պատկանում ենք հայ-

կական քաղաքակրթությանը, այսինքն՝ ուրույն քաղաքակրթության կրող ենք: Որպես հայկական քաղաքակրթության բաղադրիչներ նշվում են հիմնականում հնագույն ազգ լինելը, ուրույն մշակույթ, լեզու, խառնվածք ունենալը:

Գրեթե ոչ ոք արևելյան քաղաքակրթությունը դրական չի որակում կամ որևէ չափանիշով չի արժևորում: Միայն մեկ դեպքում հարցվողը դրական է որակել արևելյան քաղաքակրթությունը, քանի որ «այնտեղ հոգևորը շատ է»:

ՀԿ առաջնորդների պատասխանները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

ա. խառը. Հայաստանը քաղաքակրթությունների խաչմերուկ է (առավել հաճախ է հնչել).

- *երիտասարդներն ավելի առաջադիմական են, մեծերը՝ ասիական, ամեն շերտ իր քաղաքակրթական կողմնորոշումն ունի,*
- *քաղաքակրթությունների խառնարան ենք, ամեն ինչ կա՝ և՛ վատը, և՛ լավը: Երիտասարդության շրջանում հիմնականում եվրոպական է, տարեցների՝ սովետական: Երկու քաղաքակրթությունների կոնֆլիկտ է՝ եվրոպական և սովետական, մտածողության կոնֆլիկտ է: Ես ինձ զգում եմ և՛ հայ, և՛ աշխարհի քաղաքացի, ո՞րն է կարևոր՝ ազգ-պետությո՞ւնը, թե համաշխարհային տնտեսությունը, ես դեռ ինձ համար չեմ ընտրել, ինքնության խնդիր է,*
- *հայկական ճաշատեսակ «աջաբ-սանդալի» նման է՝ ամեն ինչ կա,*
- *ինտելեկտուալ տեսակետից՝ եվրոպական, կենցաղային՝ ասիական,*
- *խառը, Հայաստանում բախվում են քաղաքակրթությունները, բայց պետք է պաշտպանել մերը՝ նորը սովորելով:*

բ. եվրոպական (մեր զրուցակիցները այսպես են պատասխանել՝ հիմնականում նկատի ունենալով առկա դրական երանգները և արտահայտելով իրենց անձնական ցանկությունը մեզանում տեսնելու եվրոպական արժեհամակարգի հաղթանակը).

– *եվրոպամետ, բայց իր ուրույն դեմքը ունի, կան նաև հեթանոսության տարրեր: Մի շարք հայկական ծեսեր կան, որոնք պետք է վերանան,*
– *ավելի եվրոպական ենք, մենք անհատների ազգ ենք, խմբով միայն քոչարին է ստացվել,*
– *մեր հյուրերն ասում են՝ այստեղ խառնուրդ է Եվրոպայի ու Ասիայի, բայց ես նախընտրում եմ մեզ կոչել եվրոպական,*
– *ավելի շատ եվրոպական, կրոնով՝ քրիստոնեական, լեզվական առումով՝ հնդեվրոպական, արժեքներով նույնպես, քանի որ ժողովրդավար ենք, արդարության, ազատության գաղափարները մեզ մոտ գերիշխող են:*

գ. ասիական (հիմնականում նկատի ունենալով առկա բացասական երանգները).

– *Մերձավոր Արևելքի քաղաքակրթություն է՝ պասիվ հասարակություն և կիսահանցագործ ռեժիմ, բայց ՀՀ-ում կան դեմոկրատիայի տարրեր, որոնք կարելի է ուժեղացնել: Եթե համապատասխան աջակցություն լինի ներսից և դրսից…, մենթալիտետի խնդիր չունենք, տարբեր մենթալիտետի ազգեր նորմալ պետություն են ստեղծել, պետք է օրենքը հարգել,*
– *արևելյան, ուզում ենք արհեստականորեն ներմուծել արևմտյանը, ամերիկյանը, բայց չի ստացվի,*
– *թող ինձ ներեն հայերը՝ զուտ ասիական, ուզում ենք եվրոպական լինենք, ոչ ոք չի փախչի իր գեներից, արյան կանչից:*

դ. հայկական (ոչ հաճախ).

– *հայկական, մենք անհատների ազգ ենք, և՛ դեմոկրատ ենք, և՛ բռնակալ, մենք առանձին քաղաքակրթություն ենք,*
– *ուրույն հայկական, Ասիայում՝ Եվրոպա ենք, Եվրոպայում՝ Ասիա,*
– *յուրահատուկ հայկական քաղաքակրթություն ենք: Աստված չանի, որ արևմտյան լինի, քանի որ վերցնում ենք վատը, նմանվում ենք ամերիկացիներին: Արևմտյանը՝ նորին գերազանցություն «փողի» իշխանությունն է,*
– *յուրովի՝ ո՛չ ասիական, ո՛չ եվրոպական: Մենք և՛ տվել ենք ուրիշներին, և՛ վերցրել: Արևելյան քաղաքակրթությունը՝ ավանդական հայացքներով է, իսկ արևմտյանը՝ դեմոկրատական: Ասիական քաղաքակրթությունը շատ ավելի հարուստ է, քան եվրոպականը, բայց ՀԿ-ների շրջանում առավել եվրոպական արժեքներին են դավանում:*

Բացի վերը նշված խմբավորված պատասխաններից, հնչել են նաև *կովկասյան, ամերիկյան, ռուսական, սովետական* տարբերակները, սակայն ոչ հաճախ:

Այսպիսով, հայ հասարակության և հատկապես հասարակական կազմակերպությունների շրջանում եվրոպական արժեքային համակարգը, ի տարբերություն արևելյանի (և հետաքրքիր է, որ նաև ամերիկյանի), առավել ընդունելի է համարվում: Այս երևույթը թերևս կարելի է բացատրել ոչ միայն հայերի և եվրոպական ժողովուրդների միջև պատմական անցյալում արձանագրված փոխազդեցությունների հարուստ փորձով, այլև նրանով, որ միջազգային քաղաքական համակարգում ամերիկյան և եվրոպական ռազմավարություններն ակնհայտորեն տար-

բերվում են իրարից: Ինչպես նշում է Ռ.Կեյգանը, «Եկել է այն պահը, երբ պետք է դադարել ձևացնել, թե ամերիկացիների և եվրոպացիների՝ աշխարհին ուղղված հայացքները միանման են»[1]: Հեղինակի կարծիքով, Ամերիկայի և Եվրոպայի մոտեցումները տարբերվում են կարևոր հարցերի՝ ուժի, նրա արդյունավետության, բարոյականության հանդեպ ունեցած վերաբերմունքով, որ ժամանակակից Եվրոպան ուժի նկատմամբ խոր հակակրանք է տածում: «Եվրոպացիները պնդում են, որ խնդիրների լուծման իրենց մոտեցումը բարդ է և հարուստ նրբերանգներով: Իրենք ձգտում են ուրիշների վրա ազդել հմուտ և ոչ այնքան ուղղաձիգ քաղաքականության միջոցով»[2], - գրում է Ռ.Կեյգանը:

Այսպիսով, հայ հասարակությունը, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ տարածքում ապրող ժողովուրդները, հայտնվել են ազգային արժեհամակարգի հանդեպ տարբեր քաղաքակրթական ,արշավանքներիե ազդեցության կիզակետում:

Այս պարագայում արդյոք հնարավո՞ր է ազգային դիմագծի պահպանումը, որո՞նք են այն տարրերը, որոնց վրա հիմնվելու դեպքում կարելի է պահպանել ազգայինը՝ միաժամանակ չհակադրվելով համամարդկային արժեքներին, չմեկուսանալով արտաքին աշխարհից: Այս արդիական խնդրին մեր մոտեցման հիմքում այն գաղափարն է, որ ***հայ հասարակությունը լոկալ քաղաքակրթության օրինակ է իր ուրույն, ինքնատիպ մշակույթով, կրոնով, լեզվով, ավանդույթներով, խառնվածքով, հարուստ անցյալով:***

[1] Kagan R., Power and Weakness, Policy Review, 2002, No. 113.
[2] Տե՛ս նույն տեղը:

Միայն հնի ու նորի օպտիմալ համադրության արդյունքում է հնարավոր քաղաքակրթական ներկայիս արշավանքների պայմաններում ոչ միայն պահպանել ազգային դիմագիծը, այլև հարստացնել այն համամարդկային արժեքներով: Բայց այս միաձուլումը անհրաժեշտ է իրականացնել միայն ազգային հենքի վրա, որը պետք է ամրացնել շնորհիվ ուղղահայաց (տարբեր սերունդների միջև) և հորիզոնական (աշխարհասփյուռ հայության տարբեր հատվածների միջև) կապի ամրապնդման: Միաժամանակ, վստահաբար կարող ենք ասել, որ համամարդկային արժեհամակարգի տարրերը այս կամ այն ձևով, հաճախ անտեսանելի կամ դեռևս մեր կողմից չբացահայտված ձևով ընկած են հայոց ավանդույթների, արժեքային կողմնորոշիչների հիմքում: Այսպես, ժամանակակից աշխարհում գերակա հռչակված արժեքների շարքում են ժողովրդավարությունը, արդարությունը, մարդասիրությունը և այլ նորմեր, որոնք հայ հասարակության համար ավանդական և մնայուն արժեքներ են (հիշենք, թե պատմության ընթացքում քանի-քանի անգամներ է հայությունը պայքարի ելել արդարության դրոշը պարզած): Իսկ ինչ վերաբերում է մարդասիրությանը՝ որպես ժամանակակից միջազգային հարաբերությունների առանցքային արժեք, ապա մեր պատմության ընթացքում հայ զինվորները պատերազմական բարդ իրադրությունում բազմիցս են ապացուցել իրենց հավատարմությունն այդ վեհ գաղափարին[1]:

[1] Առավել մանրամասն տե՛ս Մարտիկյան Ս., Հինգհազարամյա մարդասիրություն, «21-րդ դար», # 3 (5), 2004, էջ 3-18:

6.2 Ազգային շահը ՀԿ առաջնորդների ընկալմամբ

ՀԿ երիտասարդ առաջնորդների արժեքային կողմնորոշումների վերաբերյալ երեք հիմնական հարցադրումներից 2-րդը ձևակերպվել էր այսպես. «Ո՞րն է մեր ազգային շահը»: Նշենք, որ այն միանգամից չէր ընկալվում մեր զրուցակիցների կողմից, հաճախ պատասխանները հնչում էին երկարատև դադարից և մտորումներից հետո:

Պատասխաններից կարելի է դատել, որ ներկայումս մեզանում նկատելիորեն արժևորվում է անկախ պետության գոյությունը՝ որպես այս պատմական փուլի կարևորագույն նվաճումներից մեկը: Մեր ժամանակներում առաջնային են համարվում՝

ա. պետականության կայացումն ու ամրապնդումը (հարցմանը ենթարկվածների մոտ 30%).

- *պետականության կայացումը և զարգացումը մեծ առումով, ընդգրկում է ամեն ինչ՝ սոցիալական, լեզվի, մշակույթի խնդիր,*
- *գոյապահպանական խնդիրները ներկայումս տեղին չեն, եվրոպական ընտանիքում ազդեցիկ լինենք, դրա համար պետք է քաղաքական կամք և ժողովրդի հավաքական մտածողություն, մեզ պետք են պրագմատիկ գործնական մարդիկ, քիչ խոսողներ, քաղաքացիական հասարակության ձևավորումը ազգային շահի տիրույթից դուրս չէ,*
- *պետության զարգացումը, բարգավաճումը,*
- *պետականությունը ամրապնդել, դեռ չենք գիտակցում, որ դա արժեք է, մեծահասակների մոտ ավելի վատ հիմքերի վրա է այդ գիտակցությունը, քանի որ խորհրդային մտածողություն կա, որ եթե պետական է՝ կարելի է գողանալ,*

– *կայուն պետություն,*
– *Հայաստանի պահպանումը տնտեսական, մշակութային տեսակետից,*
– *հզոր պետություն, եթե մեր պետական շահը պահանջում է թուրքերի հետ լավ լինել, ուրեմն պետք է լավ լինենք, իհարկե, ցեղասպանությունը չմոռանանք, բայց դա պատմական հարց է։*

բ. Հողահավաքը (այսինքն՝ պատմական Հայաստանի բոլոր հողերի միավորումը).

– *գոռում ենք՝ մեզ մորթել են 1915թ., ասենք՝ մորթել են, բա հետո՞, եթե ասի ներողություն, ուրեմն պիտի բավարարվե՞նք։ Ոչ, պիտի հողերն էլ տան, համ էլ տարեկան որոշակի գումար, Ջավախքը մերը պիտի լինի, չասեմ «ծովից ծով», թեպետ դրա մասին էլ պիտի մտածենք, մի խոսքով, ազգային շահը՝ հողահավաքն է,*
– *միացյալ Հայաստանը։*

գ. քաղաքակիրթ՝ ավելի եվրոպական պետություն.

– *ունենալ նորմալ, բարեկեցիկ, քաղաքակիրթ պետություն,*
– *բոլորը հարուստ ապրեն, մեր ժողովուրդը պետք է լավ ապրի։*

դ. գոյատևել.

– *գոյատևել, խոշոր շահի մասի խոսելն ավելորդ է, աղքատ պետության ազգային շահը՝ պետության գոյությունն է,*
– *դժվարանում եմ պատասխանել, հիմա կուլ գնալը հեշտ է, գոյատևել երևի,*

ե. հայ մնալը.

– *մնանք հայ։ Մենք ընտրյալ ազգ ենք,*
– *ազգի ինքնության պահպանումն է, հայը հայ մնա, մշակութային ձուլման չենթարկվի սփյուռքում,*
– *դժվարանում եմ պատասխանել, երևի հայ մնալ ու քո երկրում մնալ,*

– *հայ էթնոսի գոյության պահպանում։*

զ. անվտանգությունը.

– *այսքան ժամանակ ճիշտն ասած չեմ մտածել, ՀՀ քաղաքացու անվտանգությունը երևի։*

է. կրթությունը.

– *ազգային շահը՝ կրթությունն է,*

– *ուժեղ բանակ, հասանելի կրթություն, ծնելիության աճ, առողջության ապահովում, արտագաղթի նվազում,*

– *առողջ սերունդ դաստիարակել, որը կարողանա պայքարել իր կարծիքի համար, նորամուծություն ընկալող, նախապաշարումներից զուրկ, կարողանա պաշտպանել մեր երկիրը ճիշտ ուղով, ոչ թե հետադիմական ու դաշնակցական։*

Կան ուշագրավ պատասխաններ, որոնք իրենց բազմազանության և ինքնատիպության պատճառով խմբավորման չեն ենթարկվում (ուշադրությանն առավել արժանի մի քանի մտքեր ներկայացված են ընդգծված).

– *ՀՀ-ն պետք է լինի նորմալ երկիր, այս պահին այդպես չէ։ Ինձ թվում է՝ բոլորը չեն գիտակցում, քանի որ ծանրաբեռնված են սոցիալ-տնտեսական կարիքներով, բայց երիտասարդության մի զգալի մասը լավ գիտակցում է,*

– *ազգային շահը՝ բալանսն է, ելնելով մեր շահերից ներկայացնել դոնորին մեր խնդիրները,*

– *ազգային գաղափարախոսությունը, ռազմահայրենասիրական դաստիարակությունը,*

– *մեկը՝ բոլորի համար, բոլորը՝ մեկի,*

– ***զգայարաններով զգում ենք, բայց չենք տեսնում, անունը չգիտենք։ Դրա համար պետք է լինեն ինստիտուտներ, նորմալ կառավարու-***

թյուն, նախագահ, որ ես իմանամ, եթե օրական մի լուսա դնեմ, իմանամ ինչի համար եմ դնում,

– *պաշտպանվել, պահպանվել, գոյատևել, մեր տարածքը մեծացնել, բարեկեցիկ լինենք, համախմբված,*
– *ազգային շահ չկա, մեր գրպանն է մեր ազգային շահը,*
– *հասարակայնորեն ակտիվ մշակույթի կրող երիտասարդներ ունենալը,*
– *չկորցնենք մեր ազգային ինքնությունը, կարողանանք ժամանակակից բոլոր միջոցները ծառայեցնել մեր խնդիրներին, ունենանք հզոր հայ ազգ, ուժեղ հայկական պետություն, կարողանանք ոչ թե ձեռք մեկնել օգնության համար, այլ մենք օգնենք ուրիշներին։ Հուսով եմ, որ 10-20 տարի հետո կհասնենք դրան։ Մենք ուժեղ ենք մեր լեռներով, դրսում ուժեղ չենք կարող լինել, միայն մեր բնօրրանում, դրա համար պետք է այստեղ ուժեղանանք,*
– *զարգացումը, 70 տարիների թերությունների վերացում,*
– ***մենք խնդիր ունենք ընդհանուր պատկերացում ստեղծելու ազգի զարգացման համար՝ տեսլական,*** *հիմա միջդիսցիպլինար ուղղությունների զարգացման շրջան է, մենք հոգնած ազգ ենք, մենք չենք ուզում խառնվենք, մեզ միայն հանգիստ թողնեն,*
– *չեմ պատկերացնում, երևի, Եղեռնի հարցը,*
– *անհատների շահերի հանրագումարից ստեղծվում է ազգային շահը,*
– *ճիշտ դիվանագիտական քաղաքականություն, լեզվի պահպանում, մատաղ սերնդի կրթություն,*
– *ավելի ճիշտ կլինի պետական շահ, քանի որ Հայաստանը պետություն է, ազգային մտածելակերպով հասարակություն, քանի որ մենք ազգային պետություն ենք,*

– *ազգային գաղափարախոսություն է պետք, զարգացման ծրագիր,*
– *զարգացումը, ազգային և քաղաքական ինքնագիտակցության բարձրացում,*
– *զարգացնենք ազգը ներկայացնելու ինդուստրիա, ցավոք մեզ ճանաչում են միայն Եղեռնով և երկրաշարժով,*
– *հետաքրքիր հարց եք տալիս ու դժվար, ՀԿ-ներում նման բաներ չենք քննարկում, դա երևի մի մեծ բան է:*

6.3 Հայաստանը 10 տարի հետո. ՀԿ առաջնորդների տեսլականը

Հարցաթերթիկի վերջին հարցն այսպիսին էր. «Ինչպե՞ս եք տեսնում Հայաստանը 10 տարի հետո»: Նշենք, որ ակնհայտորեն գերակշռում են լավատեսորեն տրամադրվածները (մոտ 65%): Պատասխանները կարելի է խմբավորել այսպես.

ա. լավատեսություն (լավ կլինի - 40,5%).

– *փոքր, բայց կայացած պետություն, ես լավատես եմ, ուզում եմ, որ նոր սերունդը գիտակցի ու վերցնի իր վրա պատասխանատվությունը,*
– *Հայաստանը ինքնակազմակերպվածության ավելի մեծ ռեսուրս ունի, քան Վրաստանը և Ադրբեջանը,*
– *առավել կայուն պետություն, հույսով լի երիտասարդներ,*
– *լավ է լինելու բոլոր տեսակետներից՝ քաղաքական, տնտեսական,*
– *լավատես եմ, 10 տարի առաջ մենք մեր տարածքը չէինք կարող տաքացնել, այսօր կարող ենք, պետք է օգնել պետությանը, պարտադիր չէ միշտ պահանջել: Սա իմ կառավարությունն է, իմ նախագահը, փոքր ազգ ենք, պետք չէ գնալ ինչ-որ տեղ պետությունից բողոքել,*

– *լավատես եմ, ես հնարավորություն ունեցել եմ գնալու, սա իմ երկիրն է, փորձում եմ օգտակար լինել, քանի որ լավ ապագա եմ տեսնում, զարգացած, ինքնուրույն երկիր, բայց չմեկուսանանք նաև աշխարհից,*
– *զարգացած երկիր, որտեղ կարելի է առանց տանիքի բիզնես անել, հանգիստ աշխատանքի ընդունվել առանց ԽՕԲ-ի, գիտելիքը բարձր գնահատվի,*
– *լավատես եմ, հնարավորություններ ունեմ, բայց չեմ գնա, ես բիզնես էլ ունեմ,*
– *երկիր, որտեղից արտագաղթ չլինի,*
– *զարգացած երկիր, հզոր սոցիալական կառուցվածքով, տնտեսապես կայուն,*
– *լավ կլինի, այսօրվա երիտասարդությունն ավելի ազատ է,*
– *ես լավատես եմ, կա առաջադիմություն, այսօրվա ուսանողները դասախոսներից բարձր են մակարդակով, զբաղվում են ինքնակրթությամբ,*
– *բավականին զարգացած երկիր, ավելի ժողովրդավար,*
– *կարգ ու կանոնով երկիր լինի, եթե նախարարների մեքենաները կարմիր լույսի տակ կանգնեն, մենք կդառնանք նորմալ պետություն,*
– *ժամանակը վերքերը կբուժի, լավ կլինի, ժողովրդական խոսք կա. «Երբ ոչխարի հոտը գնում և մեկ էլ հրաման է լինում՝ «ետ դարձեք», կաղերը, հիվանդները, որ միշտ ետևում էին՝ առաջներում են հայտնվում, բայց ուժեղները, գիտակիցները ժամանակի ընթացքում նորից առաջ են անցնում»:*

բ. լավատեսությունը՝ որոշակիորեն պայմանավորված Եվրոպային ինտեգրվելու հեռանկարով (լավ կլինի, քանի որ…-

24,5%).

- *լավատես եմ, պետական մակարդակով գնում ենք դեպի Եվրոպա՝ չայրելով կամուրջները մյուսների հետ, մեզ կհաջողվի գնալ Եվրոպա, քանի որ. Եվրոպան ավելի մեծ ապագա ունի, քան ԱՄՆ-ը, բևեռները փոխվելու են Չինաստան, Ճապոնիա, Եվրոպա, ԱՄՆ-ը երկար չի մնա որպես բևեռ,*
- *փոքր-ինչ կինտեգրվի Եվրոպային,*
- *արդեն կան շատ փոփոխություններ, կլինենք ավելի Եվրոպային մոտ, բայց պետք է պահել մեր արժեքները,*
- *ավելի եվրոպականացող երկիր, ես դրան հավատում եմ,*
- *կախված է քաղաքական զարգացումներից, տեսնում եմ որպես զարգացած ու ժողովրդավար, ավելի մոտ կանգնած Եվրոպական ընտանիքին, միգուցե Եվրամիության անդամ: 10 տարի առաջ ոչ ոք չէր մտածի, որ կլինենք Եվրախորհրդի անդամ, մյուս ուղին վտանգավոր է, եթե շարունակվեն փոքր իշխանիկների տենդենցները, դա կբերի նրան, որ 10 տարի հետո կդառնանք ասիական երկիր,*
- *կայուն, ժողովրդավար պետություն, մարդու անվտանգությունը ապահովված, բարեկեցիկ կյանք, շարունակելու ենք ինտեգրվել միջազգային հանրությանը,*
- *Հայաստանի հասարակությունը 10 տարի հետո կընդունի Մարդու իրավունքների նորմերը, կունենա քաղաքացիական հասարակություն, բայց այդ ամենը ներդրած հայկական մենթալիտետի մեջ,*
- *լավ կլինի, քանի որ նպաստավոր քայլեր են կատարվում, օրինակ՝ Եվրախորհուրդ մտանք, եթե Եղեռնը ճանաչեն՝ լավ կլինի,*
- *ավելի եվրոպական:*

գ. անորոշություն (8%).

– *անորոշություն է, ամենակարևորը ԼՂՀ-ի խնդիրն է, քանի դեռ այդ խնդիրը կա և շահարկվում է դրսի ուժերի կողմից, դժվար է կանխատեսել,*

– *չեմ պատկերացնում,*

– *դժվարանում եմ պատասխանել,*

դ. Հայաստանի ապագայի վերաբերյալ մտահոգություններ (լավ կլինի, եթե…- 13,5%).

– *10 տարի հետո կունենանք խելացի կադրերի պակաս, բերում ենք եվրոպական ռոբոտներ լցնում պետական ապարատ: Պետք է խուսանավել, ընդդիմությունը պետք է աշխատի մի ճամբարի համար, պետությունը՝ մյուս, բայց իրար հետ համագործակցեն, ստեղծվի միջին խավ, քանի որ նրանք են հարկ մուծում, կառաջարկեմ մինչև 2003թ. միջին գործարարների բոլոր հարկային պարտքերը զրոյականացնել, կունենանք 20% տնտեսական աճ,*

– *որոշ ազգային արժեքների կորուստ, բայց կլինի նաև հայրենասիրական դաստիարակության աճ,*

– *լավ է լինելու, եթե պատերազմ չլինի,*

– *ցավ եմ ապրում մեր դպրոցների վիճակից,*

– *լավ կլինի, կարևորը մշակույթը չկորցնենք, վտանգն այն է, երբ երիտասարդը լսում է հայկական երգ ոչ հայկական երաժշտությամբ:*

ե. հոռետեսություն (լավ չի լինի - 13,5%).

– *ծանր կանխատեսումներ ունեմ, երևի լուրջ կոնֆլիկտային ցնցում կլինի: Գիտության ճգնաժամ կա՝ գիտությունը լուրջ բազա է կուտակել և չի տեղավորվում ներկա պարադիգմայի մեջ,*

– *մենք կունենանք ավելի մեծ արտաքին պարտք,*

– *հնարավոր է, որ պատերազմ լինի, Ղարաբաղին անկախություն չեն տա, 7 շրջանները կվերադարձնենք Ադրբեջանին, չենք զար-*

գանում կոռուպցիայի պատճառով,

- *շատ վատ ապագա եմ տեսնում, քանի որ երիտասարդության 80-90%-ը զզվում է Հայաստանից,*
- *որոշ սոցիալական խնդիրներ կլուծվեն, բայց ունենք արտաքին մեծ պարտք և կարող է անկախությունը կորցնենք։*

Այսպիսով, երկու (լավատեսություն և լավատեսություն՝ պայմանավորված Եվրախորհրդին անդամակցությամբ) դրական ցուցանիշների հանրագումարից ելնելով՝ փաստենք, որ Հայաստանի ապագայի վերաբերյալ երիտասարդական ՀԿ սեկտորում գերակշռում են լավատեսական տրամադրությունները (այս պատասխանների հանրագումարը հասնում է 65%-ի)։ Մտահոգիչ, տարակուսող, խիստ բացասական կանխատեսումներ ունեցող հատվածը (մտահոգություն և հոռետեսություն) կազմում է 27%։ Իսկ անորոշության մեջ են հարցվողների միայն 8%-ը։

Ամփոփում

1. ՀԿ-ների գործունեության վերլուծությունը վկայում է, որ ՀՀ բնակչությունը տարածաշրջանի կտրվածքով աչքի է ընկնում որպես առավել ժողովրդավարական ավանդույթներով, նաև անհատական և ինքնուրույն գործունեությանը ձգտող մի հասարակություն։ Միևնույն ժամանակ Հայաստանի ՀԿ սեկտորն իր գործունեության ուղղվածությունը և բովանդակությունը կողմնորոշում է ըստ դրամաշնորհային ծրագրերի թեմատիկայի, որը հաճախ ադեկվատ չէ մեր հասարակության հրատապ խնդիրներին։ Հատկանշական է, որ ՀՀ-ում ազգա-

յին մշակութային արժեքների պահպանման, զարգացման, տարածման ուղղվածությամբ գործող երիտասարդական ՀԿ-ների թիվը կազմում է գործողների ընդամենը 3-4 %-ը։

2. ՀԿ-ներում ձևավորվում է երիտասարդ գործիչների մի հատված, որն աչքի է ընկնում իր մասնագիտական կարողություններով, հաճախ՝ առաջնորդներին բնորոշ հոգեկերտվածքով, հասարակական-քաղաքական գործընթացներին արագ արձագանքելու ունակությամբ, մի մասը՝ որոշակի քաղաքական հայացքներ հետապնդող, իսկ գերակշռող հատվածը՝ քաղաքացիական պարտքի զգացումով և իր ապագան կերտելու պատրաստակամությամբ։
3. Միևնույն ժամանակ ՀԿ-ների գործունեության կողմնորոշվածությունը, ըստ դոնորների դրամաշնորհների թեմատիկայի և գերակայությունների բացասական է ազդում աշխատանքի արդյունավետության վրա, հեռացնում նրանց հայ հասարակության հիմնախնդիրներից։ Այսպիսով, տեղի է ունենում ազգային ներուժի ոչ ռացիոնալ օգտագործում։
4. Թեպետ ՀԿ դաշտում ներկայումս ձևավորվել և գործում են մի շարք դաշինքներ՝ բնապահպանական, իրավապաշտպանների (Երևանում), երիտասարդների հիմնախնդիրներով զբաղվող (Գյումրիում), Հարավային բլոկ (Սյունիքի և Վայոց ձորի մարզերում) և այլն, սակայն, ընդհանուր առմամբ, ՀԿ-ների միջև համագործակցությունը թույլ է, ինչը նույնպես հանգեցնում է նրանց գործունեության ցածր արդյունավետությանը։

5. ՀԿ-ների շրջանում հասունացել է ՀԿ դաշտի օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտության գաղափարը: Բարեփոխումների արդյունքում ակնկալվում է բիզնես սեկտորի աջակցություն ՀԿ սեկտորին: Օրենսդրական բարեփոխումները խթանող գործընթացներին օժանդակում են հիմնականում միջազգային կազմակերպությունները, բայց ոչ ՀՀ իշխանությունները:
6. Թեպետ «ՀԿ–պետություն» փոխհարաբերություններին բնորոշ է հակադրությունը, այնուամենայնիվ, ՀԿ-ներում տիրող հիմնական դժգոհությունն այն է, որ «պետությունն իրենց անտեսում է»:
7. Քաղաքակրթական առումով Հայաստանն ունի ուրույն քաղաքակրթական դիմագիծ, այն պետք է դիտարկել որպես «լոկալ քաղաքակրթություն»: Սակայն, ակտիվ դերակատարություն ստանձնած միջազգային դոնոր կազմակերպությունների գործունեությունը կարող է ինչ-որ չափով նպաստել քաղաքակրթական մասնատվածության գոյացմանը: Ըստ ՀԿ երիտասարդ առաջնորդների՝ Հայաստանը պատկանում է առավելապես եվրոպական քաղաքակրթության, կրելով իր մեջ ասիական մի շարք տարրեր: Շատերը նշում են անորոշ, «խառը քաղաքակրթություն» եզրը:
8. «Հայաստանը 10 տարի հետո» ՀԿ առաջնորդների տեսլականը բավական դրական պատկեր ունի՝ ավելի զարգացած ու քաղաքակիրթ, ավելի եվրոպականացված երկիր: «Ո՞րն է մեր ազգային շահը» հարցին գերակշռող պատասխանն է

պետականության ամրապնդումը:

9. Ավանդույթների հիմքում ընկած հասարակական հարաբերությունների նորմերը՝ ազգակցական, ընտանեկան, ընկերական շրջանակներում փոխօգնությունը, ինչը բնորոշ է նաև այլ զարգացած երկրներին, անհրաժեշտ է ոչ թե արմատախիլ անել նորը ներմուծելու ակնկալիքով, այլ կատարելագործել, քաղաքակրթել դրանք՝ ձգտելով ուժեղացնել դրական կողմերն ու ազդեցությունը այլ ոլորտների հիմնախնդիրների լուծման նպատակով:

Առաջարկություններ

Կարևոր է ռացիոնալ օգտագործել ՀԿ սեկտորում կենտրոնացած երիտասարդության մասնագիտական և այլ ունակությունները ՀՀ հիմնախնդիրների լուծման նպատակով: Դրա համար անհրաժեշտ է.

1. Ձևավորել ՀԿ-ների և պետության միջև համագործակցային հարաբերություններ ՀԿ-ների արդյունավետության բարձրացման, պետական շահերին համահունչ նրանց գործունեությունն ուղղորդելու նպատակով:
2. Ձևավորել ընդհանուր շփման դաշտ մի կողմից՝ երիտասարդ ՀԿ գործիչների, մյուս կողմից՝ ՀՀ իշխանությունների ներկայացուցիչների միջև: Այդ նպատակով անհրաժեշտ է կազմակերպել հանդիպումներ և կլոր սեղաններ ըստ կոնկրետ ոլորտների համատեղ խնդիրների քննարկման և լուծ-

ման նպատակով:

3. Ձևավորել համագործակցային հարաբերություններ տարբեր գաղափարական կողմնորոշումներ ունեցող երիտասարդ-ների հետ: Այդ նպատակով անհրաժեշտ է կազմակերպել թեմատիկ քննարկումներ, հանդիպումներ, սեմինարներ:
4. ՀԿ սեկտորի և բիզնես սեկտորի միջև համագործակցությունն իրականացնել ոչ միայն միջազգային կազմակերպություն-ների, այլև պետական մարմինների ակտիվ մասնակցությամբ:
5. Պետական աջակցություն ցուցաբերել հայրենասիրական, ազգային դիմագծի և մշակույթի պահպանման ուղղությամբ գործող ՀԿ-ներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3

1.1 Թեմայի արդիականությունը և հրատապությունը 3

1.2 Աշխատանքի մեթոդաբանությունը 4

2. Հասարակական կազմակերպություններ 6

3. Երիտասարդական ՀԿ սեկտորը 12

3.1 Գաղափարախոսությունը 14

3.2 Ակտիվությունը 20

3.3 Արդյունավետությունը 23

3.4 Երիտասարդական ՀԿ-ները դաշտի երիտասարդ գործիչների գնահատմամբ 33

3.5 ՀԿ-ները՝ գլոբալիզացիայի միջնորդ 36

3.6 Երիտասարդական ՀԿ-ների ներուժը 47

3.7 ՀԿ սեկտոր և բիզնես սեկտոր. համագործակցության սկիզբ 51

4. Միջազգային կազմակերպություններ և ՀԿ սեկտոր 54

4.1 Միջազգային կազմակերպությունների գործունեության ռազմավարությունը ՀՀ-ում 54

4.2 Միջազգային կազմակերպությունները ՀԿ սեկտորի ընկալմամբ 59

5. Պետություն և ՀԿ սեկտոր. Համագործակցության անհրաժեշտություն 64

5.1 Իրադրությունը 64

5.2 Միջազգային փորձ (ճապոնական մոդել) 70

6. Երիտասարդական ՀԿ գործիչների արժեքային կողմնորոշումները 74

6.1 Հայաստանի քաղաքակրթական պատկանելությունը. ՀԿ առաջնորդների մոտեցումները 74

6.2 Ազգային շահը ՀԿ առաջնորդների ընկալմամբ 80

6.3 Հայաստանը 10 հետո. ՀԿ առաջնորդների տեսլականը 84

Ամփոփում 88

Առաջարկություններ 91

Թամարա Վարդանյան
Կարեն Ավետիսյան

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տեխնիկական խմբագիր՝ Խ.Քարաուղլանյան
Շարվածքի պատասխանատու՝ Լ.Բաղրամյան

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 375106 Երևան, Գարեգին Նժդեհի, 23
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 1) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 60X84 1/16։
Տպաքանակը՝ 350։ Տառատեսակը՝ Sylfaen։
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում։